



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn  
366

11999

281

ՄՈՒՔԻԱՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԱՐԵՒԵԼԵԱՅՑ ԱՌ ԱՐԵՒՄՏԵԱՆՍ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԻԱՆԻՆ

# ՊԱՏԱՍԻԱՆ

ԳԱԴՂԻԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ ԹԱՐԳՄԱՆԱԾ

1503.



ԿՈՍՏԱՆՆՈՒԴՆՈՒԹՅՈՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԷՏԱՅՇ ՀԱԳԸԳԷԹ ԼՐԱԳՐՈՑ

1873

1240.

I

2

ՇԻՆԱԾ

ԱՐԵՒԵԼԵՍՅՅ ԱՌ ԱՐԵՒՄՏԵՍՅՍ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԻԱՆԻՆ

ՊԱՏԱՍԻԱՆ

Ա.

Աս ետքի օրերս՝ քանի մը թերթով տետրակ մը ցըրուեցաւ զանազան անձանց և այլ և այլ տեղեր : Այս տետրակը Գեր . Սուքիաս Գազանճեանին անունովն էր , ախոյանը նոր հերձեալ փոքրիկ Հայ եկեղեցւոյն , որուն մակագիրն է , Արեւելեայց առ Արեւմտեայս վերջնական պատասխանը : Այս տետրակը , ինչպէս որ գիտենք ծախու չելաւ , այնպէս՝ որ մօտ օրերս հազիւ կրցանք օրինակ մը ձեռք ձգել : Մէջը չկայ նոր կամ կարեւոր բան մը սորվելու . բայց որովհետեւ թէ հեղինակը , և թէ իր կուսակիցները ջանացին կարեւորութիւն մը տալ ասոր հրատարակմանը , պէտք եղաւ որ մենք ալ ըստ պատշաճի անոր դէմ գրելով՝ զնոյնը հերքենք :

Գազանճեան եպիսկոպոսը իր շէնքը կը կանգնէ բարեկարգութեան և մանապէս՝ եկեղեցական վարչութեան երկուութեան վրայ , որ իր հնարածն է : Հռովմայ Քահանայապետը կը դիտէ իբրեւ Պապ և իբրեւ Պատրիարք . և կը հետեւցնէ՝ թէ իբրեւ սոսկ Պատրիարք Արեւմտեան , Արեւելիք չունին երբէք պարտաւորութիւն իրեն հնազանդելու . իբրեւ Պապ , կըսէ , Արեւելիք զինքը եւ յար-

ՀՔ 369

4 366. ա

էն, որպէս թէ Պապը մատուներ մը ըլլար կամ պատու-  
կերք, և ոչ թէ մէկ Ստուածատուր իշխանութիւն  
մը, որուն պէտք է հնազանդիլ Քրիստոնէական կրօնից  
վերաբերեալ բաներու մէջ: Պաղանճեան եպիսկոպոսը  
շատ չյողնիր ապացուցանելու իր դրութիւնները, որոնք  
մտորական են, հակառակ պատմութեանց, և ուղղափա-  
ռութեան: Բաւական կը համարի Փլորենտիոյ ժողովքին  
վճիռը մէջ բերելու, որն որ բառ առ բառ հերքումն է իր  
դրութեանը, բայց փախուստ տարու համար՝ վարպետ մի-  
ջոյ մը կը բանեցունէ: Ժողովքին ամբողջ վճիռը չը բերեր,  
այլ միայն ետքի մասը կառնէ, և ան ալ խարդախած և  
այլայլած, ինչպէս վարը պիտի տեսնենք: Նորէն կըսենք,  
շատ դժարնիս կուգայ որ այնպիսի առարկայի մը վրայ  
ժամանակ պիտի անցունենք, զորն որ եպիսկոպոսական  
ամենափոքր դպրոցի մը մէջ, վերջի տկար աշակերտն ալ՝  
կրնայ յաղթութեամբ հերքել. 'ի վերայ այսր ամենայնի-  
Պաղանճեան եպիսկոպոսը անհաւատալի համարձակու-  
թեամբ՝ կը յանդգնի զՍրբեմտեայս տղէտ ցուցանել ա-  
մեն Սրբեւելեան եկեղեցւոյ վերաբերեալ բաներուն մէջ:

Բայց ամեն բանէ առաջ կը հարցունենք Պաղանճեա-  
նին, որոնք են աս Սրբեւելայ, որոնց անուամբ ինքը  
կը խօսի ու վերջնական պատասխանը կուտայ Սրբեմտեան  
եկեղեցւոյն: Տարակոյս չկայ որ ասոնք՝ ոչ Յոյնք են և ոչ  
Էջմիածնական Հայերը, որոնք ամենեւին չեն ճանչնար  
զՊաղանճեան եպիսկոպոսը՝ իբր իրենց եկեղեցւոյն ան-  
դամ. նաեւ ոչ Փլորենտիոյ ժողովքը կընդունին, զորն որ  
Պաղանճեանը մէջ կը բերէ 'ի հաստատութիւն իւր խընդ-  
րոյն: Երբէք չենք կրնար հաւատալ, որ այս Սրբեւելայ  
որոնց իբր փոխանորդ եղած Պաղանճեանը, կը դիմա-  
մարտի և ասպարէզ կը կարգայ կաթողիկէ եկեղեցւոյն  
դէմ, ըլլան Մարօնիները, Մէլքիզները, Ստորիք ու Բազ-  
դէայիք. վասն զի բոլոր այս Սրբեւելածէս ուղղափառք,  
հերձուածող կը ճանչնան զՊաղանճեանը և իր հետեւող-  
ները Սուրբ Աթուոյն վճուոյն համեմատ: Չեն ճանչնար  
նաեւ ոչ իրեն ատղոսը, և ոչ իշխանութիւնը՝ որ կարե

նայ խօսիլ ուղղափառաց անուամբը: Հապա այս գրու-  
ցածները 900 կամ 1000 'ի կաթողիկէ եկեղեցւոյ բա-  
ժանեալ Սրբեւելայ Հայոց անուամբն է, և այս սակաւա-  
զումար ժողովուրդին բերնէն է որ երկու հարիւր յիսուն  
միլիոնով բազկացած կաթողիկէ եկեղեցւոյ, վերջնական  
պատասխան կը խրկէ:

Խնդար՛ւ բան.

Այճկ գիտէ Պաղանճեան եպիսկոպոսը որ իր աս  
900 կամ 1000 հետեւողներուն, երեքին երկուքը չեն  
հաւատար ոչ Փլորենտիոյ ժողովքին, զորն որ իրեն օգնու-  
թեան կը կանչէ, ոչ եկեղեցական բարեկարգութեան օ-  
րինաց, եւ ոչ իր եպիսկոպոսական վիճակին, զոր մի  
միայն իրենց մասնաւոր դիմանը կը ծառայացունեն: Ս-  
սանկով բողբովին ծիծաղելի կը դոնենք իր տետրակին  
նոյն իսկ վերնագիրը:

Բ.

Որչափ որ ծիծաղական է Պաղանճեան եպիսկոպո-  
սին շինած տետրակին վերնագիրը, այնչափ ալ խախուս  
է իր շինուածքին հիմը: Վասն զի կաթողիկէ եկեղեցւոյ  
մէջ կը հնարէ երկու-երեւոյ մը ոչ միայն բարեկարգու-  
թեան, այլ և վարչութեան. մէկը արեւելեան, միւսը  
արեւմտեան: Առանց հիման կը հաստատէ կաթողիկէ ե-  
կեղեցւոյ մէջ՝ երկու արեւոյն հոյ-բիւն մէկ մէկէ տար-  
բեր. մէկը յատուկ Սրբեմտեան եկեղեցւոյ, և միւսը  
Սրբեւելեան. երկու Բնագրեւելեան բարեկարգութեան և  
վարչութեան. երկու կարգ հիմնական ուղղաց ետդս տարբեր  
մէկը մեկալէն, և այնչափ հին են այս ամենքը կ'ըսէ, որ-  
չափ հին է հիմնարկութիւնը Յիսուսի Քրիստոսի Եկե-  
ղեցւոյն:

Արդ՝ այս սկզբունքը ծուռ է եթէ ըստ իրաւանց և  
եթէ ըստ դործոյն: Եկեղեցւոյ Ստուածային հիմնադի-  
րը, Գրեւելեան վրայ կանգնեց իր շէնքը. և ուզեց որ այս  
Գրեւելեան այնպէս խորարմատ ըլլայ, և այնպէս գերազանց,

ինչպէս ինքը մէկ է իր յաւիտենական Հօրը հետ : Իւր քարոզած հաւատքը և պատուիրանքները , հաւասար հրամայեց ամեն եկեղեցեաց , ու հաւտաց Սուրբ Պետրոսի առաքելոյն իր եկեղեցւոյն վարչութիւնը , առանց զանազաներու արեւելքը արեւմուտքէն , ու երբ իշխանութիւն տուաւ իրեն հովուելու իր զառնուկները ու ոչխարները , տարբերութիւն չը դրաւ արեւելքի և արեւմուտքի մէջ : Աս սուրբ Պետրոսն է , զլուին Առաքելոց , որուն Յիսուս ըսաւ՝ թէ ինքն է այն վէճը , որուն վրայ պիտի հիմնէ իր եկեղեցին , ու դժոխքի դուռները չպիտի կարենան յաղթահարել զինքը : Ուրեմն այս վերջին գրեթէ վրայ է որ յանձն սրբոյն Պետրոսի , ու իր յաջորդացը՝ Հռովմայ քահանայապետներուն , հիմնեցաւ եկեղեցին Քրիստոսի :

Չկայ նաեւ այնպիսի այլանդակ սխալ մը ինչպէս է Պաղանճեան եպիսկոպոսին հնարածը . այսինքն՝ ի սկզբանէ եկեղեցւոյն եկեղեցական բարեկարգութեան երկուսն էին : Աղէկ դիտեն Աստուածաբանութեան , եկեղեցական Պատմութեան և կանոնական իրաւանց աշակերտները , որ առաջին դարուց ժամանակը եկեղեցին կարգաւորող կանոնները՝ ուրիշ բան չէին , եթէ ոչ բովանդակութիւն Աւետարանական պատուիրանաց , առաքելական աւանդութեանց և հաւաքումն առնելու ըստած կանոններուն , և այս իրաւանց հաւաքումը , հասարակ ըլլալով ամէն եկեղեցիներուն ընդհանրապէս , սկսաւ հետզհետէ ընդարձակիլ աւելցունելով բարեկարգական կանոնները , զոր կը սահմանէին ընդհանուր ժողովքները . ու այս կանոնները Ս. Պապերուն հաստատելէն ետքը , այնպէս պարտաւորեցան պահելու Արեւելեայք , ինչպէս Արեւմտեայք : Սասնկ Նիկիոյ , Կոստանդնուպօլսոյ , Եփեսոսի և Քաղկեդոնի , և ուրիշ ընդհանուր ժողովքներու կանոնները , որոնք աւելցան ընդհանուր եկեղեցւոյ կանոնական իրաւանց վրայ , բաց ՚ի քանի մը մանր փոփոխութենէ , որոնք պատահական և սեփական էին այլ և այլ քաղքերներու , բայց ոչ երբէք էական էին , ինչպէս կը պահանջէ Պաղանճեանը : Աս ալ իրաւ է որ կան ժողովքներ , նաեւ դաւառական ըստած , ու

որոնց բարեկարգական կանոնները՝ յետ որոյ որ ընդունեն է Սուրբ Աթուր , եւելցուցած են կանոնական իրաւանց հաւաքման հետ ոչ միայն Արեւելեան եկեղեցիներուն , այլ և Արեւմտեաններու մէջ . ինչպէս են Անկիւրիոյ ժողովքին 23 կանոնները , Նէսկեսարիոյ 14 , Փանզրայի 20 : Եւ Անտիոքայ ժողովոյն 23 կանոնները (1) : Եւ կը գտնենք որ նոյները կը յիշատակեն Արեւելեան հարց հետ այսինքն Ս. Բարդղի , Ս. Աթանասի Ս. Կիւրղի , Ս. Յովհաննու Ոսկերբարանի , նաեւ Արեւմտեան եկեղեցւոյ վարդապետք , Սուրբ Կիւրիանոս , Սուրբ Ամբրոսիոս , Ս. Օգոստինոս : Վասն զի իրենց անձանօթ էր բոլորովին Արեւելեան և Արեւմտեան իրաւանց խտրութիւնը , մի միայն Քրիստոնէական երկուսն էր որ կը ճանչնային : Նոյն իսկ Արեւելեան և արեւմտեան եկեղեցի կոչուելուն սկիզբը անատեն դրուեցաւ , երբ Հռովմէական կայսրութիւնը բաժնուեցաւ , ու լեզուաց տարբերութեան պատճառաւ ծէսնալ տարբեր եղաւ , բայց ասով չհաստատուիր բարեկարգութեան երկուսն էր , ուր մնաց վարչութեան : Ասկից առաջ կուգայ , որ երբ Լատին եկեղեցւոյն հարք յԱւելելս կերթային , ազատաբար որ լեզուով որ ըլլար կը պատարագէին , եթէ Յունարէն և եթէ Ստորերէն . և ասոր փոխադարձը : Կը տեսնենք նաեւ եկեղեցական առաջնորդ մը արեւելեան գաւառի , որ կերթայ կառավարելու Արեւմտեան եկեղեցիները , և փոխադարձը : Այսպէս Ս. Իրենոս որ կը վերաբերէր Զմիւռնիոյ եկեղեցւոյն , դնաց (երկրորդ դարուն) կառավարելու Պաղղիոյ մէջ Լիճնի եկեղեցին . այսպէս ահա անձանօթ էր եկեղեցիներուն զանազանութիւնը :

Կը խոստովանինք , որ ետքի ժամանակները սկսաւ երեւալ հակամիտութիւն մը բարեկարգական զանազանութեանց , և քիչ քիչ վարչութեան երկուսն էր , բայց ասոնք՝ չէ թէ եկեղեցւոյն հիմնադրութիւնէն ՚ի վեր էին , այլ յետ որոյ սկսաւ հերձուածը արեւելքի մէջ . ինչպէս

(1) Վանսերեն . հաս. Դ. Տէվոզի . կան. իրաւ. հատ. 1. 541 :

եօթներորդ դարուն՝ Տրուղեան հերձիչ ժողովքը եղաւ , որ իրօք հաստատեց բարեկարգութեան զանազանութիւնը : Ուստի կաթողիկէ եկեղեցւոյ մէջ երկու վարչութիւն դրնելը՝ պարզապէս հերետիկոսութիւն է , զորն որ նոյն ինքը Փլորենտիոյ ժողովքը կը դատապարտէ , ինչպէս վարը պիտի տեսնենք :

Գալով հիմայ բարեկարգութեան երկուութեան , նմանապէս հերետիկոսութիւն մըն է երկուութիւն զնեւ հիմնական բարեկարգութեան մէջ , որն որ բոլոր կաթողիկէ եկեղեցւոյ մէջ մի և նոյն է : Վասն զի ինչպէս հաւատքը և բարուց սկզբունքը միևնոյն են եկեղեցւոյ մէջ , այսպէս ալ հիմնական բարեկարգութիւնը , որ հիմնած է հաւատոյ և բարոյական սկզբանց վրայ , չկրնար մէկէն եւել ըլլալ : Այսպէս հասարակաց հիմնական իրաւունքն ալ մի և նոյն է բոլոր եկեղեցւոյ մէջ : Իսկ որպէս զի պատահական զանազանութիւնները կարենան օրինաց ուժ ունենալ , պէտք է որ կամ իրօք և գրականապէս հաստատուած ըլլան Ս. Գահէն , կամ անկից դատապարտուած չըլլան . չկայ եկեղեցւոյ մէջ բան մը , որ կանոնի զօրութիւն ունենայ առանց հաստատութեան Անոր , որ գերագոյն հովիւն է և տեսուչ :

Սովորաւ Յոյն պատմագիրը , որուն վրայ չեն կրնար կասկածիլ Արևելեայք , գովելով կը յիշէ զՅուլիոս Պապը , (Եկեղ. Պատմ. Գիրք Բ. պր. 13. Տպագր. Բասիլիա 1570) որ յամին 347 գրելով Անտիոքայ Արևելեան եկեղեցւոյն եպիսկոպոսաց , կըսէ , « Եկեղեցական կանոնը կ'արգելու որ եկեղեցիներու օրէնք չի գրուի , քանի որ Հռովմայ Հայրապետը հաւանած չէ » : Սրբազան Պապերուն օրէնսդրական և դատաւորական իշխանութիւնը մի և նոյն է յԱրևելս , որ ինչ է յԱրևմուտս . ու Արևելեան կայսերք իսկ ճանչցեր էին Սրբազան Պապերուն ընդհանուր իրաւասութիւնը : Յուստինիանոս կայսրը (վեցերորդ դարուն) գրելով Եպիփանի կոստանդնուպօլսոյ Եպիսկոպոսին , (Օրինաց գիրք 1. Տիտ. 1. օրէնք. 7) այսպէս սաստիկ կը խօսի : « Անտանելի բան է մեզի համար , որ Բն ու Էրաբեկ Ե »

« Երեցոյ վեհակն , Հարցուի երջանիկ Հռովմայ Քահանա-  
» յապետին , վասն զի Բն է գլուխը ամեն Սրբազան Քա-  
» հանաներուն Սատուծոյ » : Եւ եկեղեցական կանոնաց աշխատասիրութեան մէջ , կ'եկոյնէ : « Աս ամեն բաներուն մէջ , (այսինքն , բարեկարգական և օրէնսդրական կարգաւորութեանց , որոնց վրայ կայսրը կը զբաղէր ) « պա-  
» հեցինք միութեան վիճակը ամէն Սուրբ Եկեղեցեաց՝  
» Հռովմայ Սրբազան Պապին հետ , որուն հաղորդեցինք  
» ասոնց ամենը » :

Եւ Վաղենտինոս երրորդ կայսրը՝ օրէնսդրական սահմանադրութեան մէջ , որն որ Թէոդոսի օրինաց հետ միացուցած է , թողուցած է այս յիշատակաց արժանի խօսքը , « Ամեներջանիկ Պետրոսի առաքելական գլխաւորութիւնը , որ Քահանայական պսակին իշխանն է ,  
» և պարծանք Հռովմայ քաղքին , ճանչցուեցաւ նաև Սուրբ  
» ժողովքներէն , ուստի կը հրամայենք մշտնջենաւոր վրձ-  
» ուով , որ ոչ Քաղղիոյ Եպիսկոպոսները , և ոչ « Բն ու Էր  
» եջ եկեղեցւոյ կամ գաւառի եպիսկոպոսներ իշխեն հա-  
» կառակ հին սովորութեան , բանի մը ձեռք զարնել » :  
» Բն ու Էրաբեկ Յարգելի անձին՝ Պապին յաւիտենական քա-  
» ղաքին , ու թէ՛ այս եպիսկոպոսները , և թէ՛ ուրիշները  
» չկարենան օրէնք մը ունենալ առանց Առաքելական Աթո-  
» ուոյն հաստատութեանը » : Արեղիոս կայսրը , թէպէտ հեթանոս էր , բայց զիտնալով որ ամեն վէճ , նաև բարեկարգական , եթէ Արևելքը ըլլայ և եթէ Արևմուտք , պէտք է որ Հռովմայ գահը սրոյնէ . երբոր Պօղոս Սամոսատի Արևելեան եպիսկոպոսը՝ զոր Անտիոքայ ժողովքը ձգեց աթոռէն , չէր ուզեր եպիսկոպոսարանը յանձնել իր օրինաւոր յաջորդին . Արեղիոս սրոյնց , որ Հռովմայ հայրապետը՝ որուն որ պատշաճ դատի կոնդակաւ եպիսկոպոսարանը , ինքնալ անոր կը վճռէ յանձնել » :

Իտալիոյ գործքիս համառօտութիւնը , չենք կրնար երկայն բարակ շարել բոլոր այն դէպքերը , որոնք կապացուցանեն թէ կառավարութեան միութիւնը հաստատուած է Հռովմայ Քահանայապետին վրայ , և հիմնական բարեկար-



զական միութիւնն ալ Սրբ. Պատկերուն օրէնսդրական իշխանութենէն կը կախուի :

Եկեղեցական պատմութեան մէջ՝ գլխաւոր գէպք մը նէ որ չուրացուիր, որ Սուրբն Պոլիկարպոս Զմիւռնիոյ հայրապետը, ու Յովհաննու աւետարանչի աշակերտը, Հռովմ գնաց Սուրբ Անիգէտ Պապին, որ խորհրդակցի Զատիկի տօնախմբութեան օրուան համար: Եւ Վիկտոր Ա. Պապը (1) յամին 200 նշովք սպառնացաւ Սսիոյ եպիսկոպոսներուն, թէ որ իրենք ալ համաձայն չտօնեն Զատիկին օրը Հռովմայ եկեղեցւոյն հետ. Սուրբն Իրենէոս՝ զոր վերը յիշեցինք, միջնորդ եղաւ աղաչելով զՎիկտոր Պապը, որ խնայելով Սսիոյ եպիսկոպոսաց, չպատժէ զիրենք եկեղեցական արգելմամբ. և եկեղեցւոյ սոյն այս երեւելի վարդապետը՝ որ Սուրբ Պոլիկարպոսի աշակերտ էր, կըսէ, «Սմմէն եկեղեցի պէտք է որ Հռովմայ եկեղեցւոյն համաձայնին, իր դերագոյն գլխաւորութեան համար» (2) :

Սոյն Եւսեբիոս պատմագիրը կը պատմէ, որ Սուրբն Ինոնէսիոս Աղեքսանդրիոյ եպիսկոպոսը, պարտաւորուեցաւ դիմել Սուրբ Ստեփանոս և Սուրբ Սեքստոս Բ. Պապերուն (երրորդ դարուն մէջ), հերետիկոսներուն ըրած մկրտութեան համար. ասանկ կը գրէր առ Սուրբն Սեքստոս. (3) «Իրօք պէտք ունիմ Ձեր խորհրդեանը և «կըսպասեմ Ձեր որոշմանը, որպէս զի չսխալիմ.» Եւ որովհետեւ (ինչպէս կը կարծուի) Սուրբն Կիպրիանոս Ափրիկեցին Կարթագինոյ եպիսկոպոսը (երրորդ դարուն) կը պնդէր, հակառակ վերը յիշած Սուրբ Ստեփանոսի Պապին թէ հերետիկոսաց ըրած մկրտութիւնը ոչինչ է, կըսէ Սուրբ Օգոստինոսը (4). «Թէ Սուրբ Կիպրիանոս չէր կրնար քաւել իր անհնազանդութեան յանցանքը ընդ-

(1) Եւսեբ. Գիրք. Ե. Գլ. 24 :  
(2) Ընդդ. Հերետ. Գլ. Գ. Պր. 5.  
(3) Եւսեբ. Գիրք. Ե. Գլ. 2.  
(4) Գիրք Բ. ընդդ. Կրետ. Գլ. 52 :

« գէմ Առաքելական Աթոռոյն Հռովմայ, եթէ ոչ իր մար-  
» արտութեամբը » :

Սուրբն Աթանաս Աղեքսանդրիոյ հայրապետը, որ Արեւելեան եկեղեցւոյ երեւելի վարդապետաց մէկն էր, (չորրորդ դարուն), չէ թէ զՍրբ. Պապը պարզապէս յարգելով մը կը շատանայ, ինչպէս կը վարդապետէ Գաղանճեան եպիսկոպոսը, հապա կը խոստանայ իր եպիսկոպոսներով մէկ տեղ՝ կատարեալ հնազանդութիւն և հպատակութիւն դատաստանի Սուրբ Աթոռոյն: Սյայէս կը գրէ Սր. Մարկոս Պապին. (1) «Առ Սրբազան Հայր, Վե-  
» հափառ Հայրապետ եկեղեցւոյդ Հռովմայ, և առա-  
» քելական դահուն ընդհանուր եկեղեցւոյ. Աթանաս ու  
» բոլոր Եզրպատի եպիսկոպոսները կը փափաքինք, որ ե-  
» կեղեցական իշխանութեամբ քո Սր. Աթոռոյդ, որ Մայր  
» է և Գլուխ բոլոր եկեղեցիներուն, արժանի ըլլանք ըն-  
» դունելու Ձեր դատաստանը յանդիմանութեան ու մխի-  
» թարութեան ուղղափառ հաւատացելոյ: . . . Գիտենք  
» որ օգնութեան կը հասնիք նուաճելոց, ու մենք ալ թէ-  
» պէտ խոնարհ անձինք, բայց Ձեզի կը վերաբերինք, և  
» ձեզ կուզենք հնազանդիլ, բոլոր մեր հաւատացեալնե-  
» րուն հետ » :

Նոյնպէս ուրիշ երեւելի վարդապետ մ'ալ Արեւելեան եկեղեցւոյն՝ Սրն. Կիւրեղ (չորրորդ դարուն մէջ), ի պաշտպանութիւն կառավարչական և օրէնսդրական իշխանութեան Հռովմայ Քահանայապետին, յիշատակաց արժանի այս վկայութիւնը կուտայ (2): «Պէտք է կըսէ, որ  
» մենք իբրեւ «Երմի», միանանք մեր Գլխոյն Հռովմայ Քա-  
» հանայապետին և Առաքելական Աթոռոյն հետ. անոր  
» պէտք է հարցընենք՝ ինչ որ պիտի հաւատանք, «մենք  
» պիտի ցուցունէ, ու ստովբցունէ: Վասն զի Քոյն իբն ի-  
» բաւունքն է կշտամբել, ուղղել, հաստատել, սահմանել,  
» արձակել և կապել » :

(1) Թոռղթ. Աթան. Գիրք 5. Սողովն. Գիրք 5 Գլ. 2:  
(2) Գնձր. Գիրք. Ա. Գլ. 21:

Անկողմնասէր կարգացողին դատման ներքեւ կը ձգենք այն մեծ տարբերութիւնը՝ որ կը կայանայ 'ի մէջ իշխանութեան զոր Սբ. հարք և Արեւելեան Պատրիարքները պարտք կը համարէին ճանչնալ 'ի գլխաւորութեան Սրբ. Պապերուն, և 'ի մէջ այն տղայական պատուանուն շուքին, զոր Քաղանճեան եպիսկոպոսը կը բարեհաճի շնորհել Առաքելական Աթոռոյն:

Գ.

Քաղանճեան եպիսկոպոսը իր խնդիրը պաշտպանելու համար, ու ապացուցանելու իր բարեկարգական երկուութիւնը, մանաւանդ վարչականը, կը վազէ կերթալ Փլորենտիոյ ժողովքին. և կերեւայ որ կուզէ ապաւինիլ այն ժողովքին երեւելի վճռոյն, բայց կղզուշանայ ամբողջ մէջ բերել: Բաւական կը համարի բերել ետքի սողերը՝ թէպէտ զանոնք ալ կայլայլէ և կը փոխէ: Բայց որպէս զի բոլոր աշխարհք իմանայ թէ 'ինչպէս Քաղանճեան եպիսկոպոսին ապացոյցները սխալ են, պէտք է որ ժողովքին վճիռը, որուն վրայ խօսեցանք, ամբողջ հոս գնենք: Ահա տեսնենք թէ 'ինչ բառերով Եւզինէոս Ք. Պապը 1439ին՝ հրատարակեց այս վճիռը, ստորագրած ժողովքին հայրապետներէն:

« կը սահմանենք՝ որ Առաքելական Սբ. Գահը և Հռոմովմայ Քահանայապետը՝ ունի Քերագոյն իշխանութիւն բոլոր աշխարհքիս վրայ. և նոյն Հռոմովմայ Քահանայապետը յաջորդ է երանելոյն Պետրոսի իշխանին Առաքելոց. ճշմարիտ փոխանորդ Քրիստոսի, և Պլուլի ամբողջ եկեղեցւոյ. Հայր և վարդապետ ամենայն Քրիստոնէից. և Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ յանձն երանելոյն Պետրոսի՝ սուաւ անոր (Հռոմովմայ Հայրապետին) լիուրի իշխանութիւն արածելոյ, ուղղելոյ և կառավարելոյ զընդհանուր եկեղեցին 'ինչպէս որ կը սահմանեն նաեւ Տիեզերական ժողովոց վճիռները, և Սրբազան կանոնները: Միանգամայն նորոգելով ուրիշ Յարգելի Պատ-

« իարգաց. կանոններէն աւանդած՝ կարգը. (կը հաստատենք) որ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը երկրորդ ըլլայ Հռոմովմայ Սրբազան Քահանայապետէն ետքը. երրորդը ըլլայ Աղեքսանդրիոյ, չորրորդը Անտիոքայ և հինգերորդը Երուսաղեմի, այսինքն պահելով անոնց ամեն արտօնութիւնները և իրաւունքը »: (Ովրատ. Յուստին. Ժողով Փլորենտիոյ երես. 372):

Քաղանճեան եպիսկոպոսը մէկ դիտմամբ մը, զոր չենք ուզեր որոշել, այս Փլորենտեան վճռոյն դիմած ատեն, կը կարծէ որ կրնայ մէկդի ձգուիլ մեծագոյն մասը, և ամենահարկաւոր կտորը, ու միայն ետքի մասը կը յիշէ, և ան ալ բոլորովին այլայլած: Իսկ արդ՝ Փլորենտիոյ ժողովքին վճիռը բուն առաջին մասին մէջն է. Իսկ ետքինը ուրիշ բան չէ, եթէ ոչ 'որդէն վճռոյն Լատերանեան տիեզերական ժողովոյն, Արեւելեան Պատրիարգաց 'ինչ կարգաւ նստելուն վրայ, 'ինչպէս պիտի տեսնենք վարը:

Բայց մենք քննենք հիմայ Փլորենտեան վճիռը: Ինչ աւելի պայծառ ապացոյց կրնայ ըլլալ Սրբ. Պապերուն իրաւաբանութեան գլխաւորութեանը համար, քան զայս բառերը, « Եւրոպայի Ս. յս վճիռը Սրբ. Պապերուն իշխանութիւնը, Ս. Կրիստոսի երանելի կանուանէ, վասն զի Յիսուս Քրիստոս կրսէ սուաւ իրենց: Վարձեալ կրսէ՝ որ այս իշխանութիւնովը կարած է, կուզէ և կը կառավարէ, որ ըսել է, թէ այս իշխանութիւնը պարզ պատուանուն չէ, հապա իրական իշխանութիւն ուղղելոյ և կառավարելոյ: Կրսէ վճիռը որ նոյն իշխանութիւնը կառավարելոյ, կը տարածուի աշխարհքիս ամեն եկեղեցեաց վրայ, որ է ըսել, թէ Արեւելեան Պատրիարգական եկեղեցիք ալ նոյնպէս այդ ուղղելոյ իշխանութեան Սրբ. Պապերուն ներքեւ կիյնան: Միանգամայն կեւեցունէ, որ այդ ուղղելոյ և կառավարելոյ իշխանութիւնը լիուրի է, այսինքն չկրնար չափու մէջ սահմանուիլ կամ նուաստանալ ուրիշ Պատրիարգական Աթոռներէն, ընդհակառակը կը տարածուի բոլոր աշխարհքիս եկեղեց-

ցեաց վրայ, ըսել կուզէ այնչափ յԱրեւելս, որչափ յԱրեւմուտս, և այս գլխաւորութիւնը Սրբ. Պապերուն նմանապէս աւանդեալ է թէ Սրբազան կանոններուն, և թէ ընդհանուր ժողովքներուն մէջ:

Տեսնենք հիմայ ի՞նչպէս Քաղանճեան եպիսկոպոսը կը յանդգնի փոփոխելու և այլայլելու՝ նիւթապէս և կերպապէս՝ այս յիշատակաց արժանի վճիռը:

Ա. Մէկդի կը ձգէ ամենակարեւոր մասը, ու միայն մէկ կտորը կը յիշէ:

Բ. Կըսէ որ վճիռը այս բառերը կը գործածէ «բոս այնմ տարազու որ» (1). ուր Լատին բնագիրը, ուսկից որ մենք թարգմանած ենք բառ առ բառ, կըսէ «որպէս նաեւ (2)» ու այս երկու զրուցուածքին մէջ մեծ տարբերութիւն կայ: Քաղանճեան եպիսկոպոսը բնագիրը այսպէս այլայլելով, կուզէ հաւտացունել, որ Սրբ. Պապերուն գլխաւորութիւնը, զոր վճիռը կը յիշէ, պայմաններու տակ ձգուած է, և զոր ինքը կը յուսայ որ կրնայ գտնել ժողովոց սահմաններուն և Սրբազան կանոններուն մէջ: Մինչդեռ Փրորենտիոյ ժողովքը մասնաւորաբար կըսէ, որ այս գլխաւորութիւնը, ինչպէս ինքը կը սահմանէ, նոյնպէս աւանդուած է նաեւ ժողովոց վճիռներուն և սրբազան կանոններուն մէջ:

Գ. Յիշեալ վճիռը՝ չը խօսիր Արեւելեան Պատրիարքաց վրայ առ հասարակ որ Քաղանճեան եպիսկոպոսը կը համարձակի խօթելու բնագրին մէջ Արեւելաց բառը, ուղեւով այլայլել ան կտորին միտքը, ու իբր խնդիր մը յարուցանել Սրբ. Պապին և Պատրիարքաց Գերագործ իրաւանց վրայ, որով նոյն Պատրիարքաց կարգը կուզէ խօթել նաեւ Հայոց Պատրիարքը: Ընդհակառակը վճիռը միայն չորս Արեւելեան Պատրիարքներուն վրայ կը խօսի և այս ալ իրենց ակթուին կարգը նորէն հաստատելու, և իրենց փոխադարձ իրաւունքը ապահովելու համար՝ ըստ այնմ տարազու, որով յառաջագոյն որոշած էր Լագերանու ժողովքը: և ոչ թէ հակառակ դրութիւն մը հաստատելու:

(1) Juxta e um modum qui.  
(2) quemadmodum etiam.

կամ Սրբ. Պապին իշխանութեան սահման գնելու համար, զոր նոյն ինքը վճիռը ինուլի և ընդհանրական կանուանէ:

Դ. Սոյն այս վճռոյն մասը կը ցուցունէ իրօք Սրբ. Պապերուն իշխանութեան գլխաւորութիւնը՝ չորս Արեւելեան Պատրիարքներուն վրայ, և կ'ընէնոս Գ. Պապը հաճեցաւ, որ Արեւելեան Պատրիարքաց մէջ, առաջին տեղին ունենայ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը. միայն թէ Աղեքսանդրիոյ Պատրիարքին իրաւունքը և արտօնութիւնները, ինչպէս նաեւ Անտիոքայ և Երուսաղեմի Պատրիարքներուն, անվճար մնան: Արդ գիտենք՝ որ յարեւելս՝ Եկեղեցւոյ առջի գարեբուն ժամանակը, Աղեքսանդրիոյ և Անտիոքայ ակթուները՝ գերագոյն էին քան զմիւս Աթուները, պատճառաւ որ այն Աթուները պատուած էին Սրբ. Պետրոսէն և երկուքն ալ համարուած էին իբրեւ որդեգիր Առաքելական Աթուոյն: Այսպէս ինքնիշխանութիւն մը չունենալէն ՚ի զատ Հասկիական ակթուոյն գէժ, բողոքովին իրեն հպատակ էին: Բայց յիշեալ Արեւելեան Աթուները, անկախ Կիւիկ կը վարէին իրենց իրաւաբանութիւնը: Ի 325 ին առաջին Նիկիոյ ժողովքին ժամանակը, Հասկիայ Աթուէն վերջը ոչ Կոստանդնուպոլսոյ, և ոչ Երուսաղեմի Աթուները կը յիշուէին, հապա միայն Աղեքսանդրիոյ և Անտիոքայ, որոնց յատուկ դաւառներ որոշուած էր. որպէս զի եկեղեցական բարեկարգութիւնը կանոնաւոր կերպով պահուի, ինչպէս որ էր Հասկիայ Առաքելական Աթուին սովորութիւնը, որ ամենուն օրինակ յառաջ բերուած է: Յետ ժամանակաց Երուսաղեմայ Աթուը արտօնութիւն ունեցաւ Նախաթու ըլլալու քանի մը ուրիշ Աթուներուն, բայց աս պայմանաւ, որ Կեսարիոյ Պաղեստինացւոց մետրապօլիտին իրաւունքը անվճար մնայ: Խել մը ատենէն ետքը Կոստանդնուպօլսոյ Աթուը, որ Բիւզանդիոն կտուեր ու Հերակլիոյ Թրակիոյ ներքեւ էր, քաղաքական պայծառութեան պատճառաւ, աւելի մեծութիւն ունեցաւ, վասնորոյ և Կոստանդնուպօլսոյ ժողովոյն, ու վերջը Քաղկեդոնի ժողովքին հայրապետները ուղեցին որ Նախաթու ըլլայ Աղեքսանդրիոյ ու Անտիոքայ Աթուները:

բուն, բայց Սբն. Լէոն ու Սբ. Գրիգոր Պապերը, չուղեցին հաստատել այս փոփոխութիւնը, 'ի փնաս այս երկու Աթոռներուն, զորոնք պատուէր էր Սբն. Պետրոս: Բայց 1215 ին Տիեզերական Լադերանու ժողովքին, Իննսովկենտիոս Գ. Պապը յայտնապէս հաճեցաւ որ Կոստանդնուպօլսոյ Աթոռոյն նախապատուութիւն տրուի չորս Պատրիարգաց մէջ. իսկ Փլորենտիոյ ժողովքը ուրիշ բան չըրաւ, բայց եթէ կրկնել զնոյն կօրէն, այլ միշտ բացայայտ պայմանաւ որ փնաս մը չգայ ուրիշներուն իրաւանց և արտօնութեանց, այսինքն Աղեքսանդրիոյ, Անտիօքայ և Երուսաղեմի Աթոռներուն, որոնց վրայ Նախաթու եղաւ Կոստանդնուպօլսոյ Պատրիարգութիւնը: Ար վասցուէր որ չըլլայ թէ Կոստանդնուպօլսոյ Աթոռը, իր քաղաքական գրիցը համար, բունանայ ուրիշ աթոռներուն վրայ. ինչպէս որ քանի մը անգամ պատահեցաւ, Սհաւասիկ ստոյգ իմաստը ան խօսքին, «պահելով անոնց ամէն արտօնութիւնները, ու իրաւունքը»: Կազմուածքը իսկ այդ յօդուածին, թէ որ հաւատարմութեամբ բերուի. չէ թէ Գազանճեան Եպիսկոպոսին ըրածին պէս, կը ցուցունէ յայտնապէս որ խնդիրը բաղդատութեան վրայ չէ Հռովմայ Աթոռոյն մէջ և ուրիշ Արեւելեան Աթոռներուն, վասն զի կըսէ «Նորոգելով դարձեալ ուրիշ Պատրիարգաց կարգը, ինչպէս որ սահմաններ են Սրբազան կանոնները»: Ս. յայտնա՝ Փլորենտիոյ ժողովքին այս յօդուածը՝ Սրբ. Պապին գըլխաւորութեան սահման մը չը գնելէն զատ, ընդհակառակը վերստին կը հաստատէ անոր լրութիւնը՝ կանոնաւորելով զկարգ ու զիրաւաբանութիւն նկատմամբ չորս Պատրիարգութեանց:

Ե, Ըսինք՝ որ Փլորենտիոյ ժողովքը խօսելով Արեւելեան չորս Պատրիարգութեանց վրայ, ուրիշ բան չընէր, եթէ ոչ նորոգել Լադերանեան ժողովքին վճիռը: Հիմայ որպէս զի կարդացողները աղէկ մը իմանան այս երկու վրձիռներուն նմանութիւնը, մէջ բերենք այս ետքինին (Լադերանուն) բնագիրը: «Նորոգելով (կըսէ Իննսովկենտիոս) Պատրիարգական Աթոռոց հին արտօնութիւնները. Սբ.:

ժողովքիս հաւանութեամբ կը վճուենք, որ Հռովմայ Աթոռէն ետքը, որուն Սստուածային տրամադրութեամբ տրուած է կօրէն իշխանութիւն հրամանատարութեան ուրիշ ամեն եկեղեցեաց վրայ, իբր Մայր և վարդապետ ամենայն հաւատացելոց, եկեղեցին Կոստանդնուպօլսոյ, ունենայ առաջին տեղին. երկրորդն Աղեքսանդրիոյ, երրորդը Անտիօքայ, և չորրորդը Երուսաղեմին, ամեն մէկուն իրեն արժանապատուութիւնը պահելով: Սոյնպէս իրենց Պատրիարքները յետ ընդունելոյ Պալիոնը Հռովմայ Քահանայապետէն, որ է նշան լրութեան Պատրիարգական պաշտօնին: և յետ երգուելոյ Հռովմայ Քահանայապետին զհաւատարմութիւն և զնապաստանիւն, կընան Պատրիարգներն ալ ազատօրէն շնորհել նոյնը իրենց օգնական եպիսկոպոսաց, ընդունելով անոնցմէ կանոնական դաւանութիւն իրենց և խօստումն հնազանդութեան Հռովմէական եկեղեցոյն: Պատրիարգները կընան ամեն տեղ իրենց առջևէն Տեառն մերոյ Սբ. Խաչը տանիլ, բաց ի քաղաքէն Հռովմայ, ու այն ամեն տեղ, ուր ներկայ կը գտնուի Սրբազան Քահանայապետը, կամ իրեն նուիրակը, որ Սուրբեղական արժանապատուութեան նշանը կը կրէ: Ս. մեն գաւառներուն մէջ որոնք Պատրիարգական իրաւանց ներքև ինկած են, կընան հարկաւոր եղած ժամանակ դիմել Պատրիարգներուն, բաց 'ի այն գէպքերէն որ կը բողոքուի առ Սբ. Աթոռը, զորն որ ամենքը պէտք են խոնարհաբար յարգել»: Ս. յս խօսքերս տիեզերական ժողովք մընէ որ կը զրուցէ, ժողովք մը որուն մէջ խիստ շատ Արեւելեան և Արեւմտեան երևելի առաջնորդներ կային: Կարդացողը կը տեսնէ այս վրձուէն որ իրաւաբանութեան սկզբնաւորութիւնը միայն Հռովմայ Աթոռէն պէտք է ըլլալ. և այս Աթոռին իշխանութեան գլխաւորութիւնը կը տարածուի բոլոր աշխարհքիս եկեղեցիներուն վրայ և «պահմամբ իրաւանց» բառերը՝ յայտնապէս կը վերաբերին չորս Արեւելեան Պատրիարգաց՝ նկատմամբ մէկ մէկու. և ի-

բենց Հռոմայու Աթոռէն կախումը՝ հանդիսական կերպով հրատարակած է: Ուստի և Պատրիարքները Սրբ. Պապէն իրենց հաստատութիւնը և Բալիումը ընդունելէն ու իրեն հաւատարմութիւն և հնազանդութիւն երդուելէն ետքը, նոյնը իրենք ալ իրենց եպիսկոպոսներուն կրնան չնորհել: Եւ ասոնք ալ երբ կընդունին Պալիումը իրենց Պատրիարքներէն, պարտական են երդմամբ խոստանալ հնազանդելու Սրբ. Պապին: Կարգացողը կրնայ հիմայ դասել թէ Պապանճեան եպիսկոպոսը Փլորենտիոյ վճռոյն միտքը հաւատարմութեամբ թարղ մանած է թէ չէ: այն վճիռը՝ որ լայնաբանութիւն մըն է Լատերանեան վճռոյն: Եւ որովհետեւ տիեզերական ժողովքները մէկ մէկու ներհակ չեն կրնալ խօսիլ, հետեւաբար Փլորենտեան վճիռն ալ, թէպէտեւ ըստ ինքեան յայտնի է, նոր ուժ մը կընդունի, յար և նման ըլլալով Լատերանու ժողովքի վճռոյն:

Զ. Բաց ասից դիտելու բան է, որ եթէ դնենք թէ չորս Արեւելեան Պատրիարգաց իրաւունքն ու արտօնութիւնները սահման մը կը համարուին Սրբ. Պապին գլխաւորութեանը, ինչպէս կը պահանջէ Պապանճեան եպիսկոպոսը, որպէս թէ Փլորենտիոյ ժողովքին մէջ նոյնպէս վճռուած ըլլայ. կը հետեւի ան ատեն որ այս ժողովքը հակասութեան մէջ ընկած է. վասնզի մէկ կողմանէ կը հրատարակէ՝ որ Սրբ. Պապին իշխանութիւնը Աստուածային է, լիութի և ընդհանրական. և իրեն յատուկ է որ ուղղէ և կառավարէ զբովանդակ եկեղեցին: Միւս կողմանէ՝ ինչպէս կրնայ հաստատել, որ այս իշխանութիւնը սահմանափակ ըլլայ Պատրիարգաց իրաւամբը և արտօնութիւններովը:

Է. Կըսեմ դարձեալ, որ այսպիսի սահմանափակութիւն մը, ոչ միայն հակառակ է տրամաբանութեան, այլ և հերետիկոսութիւն մը կը կազմէ, և այս պատճառիս համար, Փլորենտիոյ ժողովքին Հայրապետները և ոչ իսկ կրնային երեւակայել այնպիսի բան մը: Վասնզի ինչպէս որ Փլորենտեան վճիռը կը հրատարակէ, իշխանութեան

1203  
1503

գլխաւորութիւնը Սրբ. Պապերուն եկեղեցական սահմանադրութիւն մը չէ, այլ յԱստուածային իրաւանց. իսկ Պատրիարգաց սահմանադրութիւնը, ինչպէս նաև Մետրապօլտաց կամ Նախագահից, եկեղեցական իրաւունք է, որ է ըսել մարդկային իրաւունք: Եւ ասոր ապացոյցն ան է, որ Պատրիարգական ակթոռներուն թիւը կրնան եւեւնալ. ինչպէս եղաւ Երուսաղեմինը և Կոստանդնուպօլտոյ, և կրնայ կարգերնին փոխուիլ, ինչպէս վերը ցրցուցինք: Սրբ. տարբերութիւնը Աստուածային ու եկեղեցական կամ մարդկային իրաւանց անհուն է. մեկը անփոփոխ է հաւատոյ Վարդապետութեան պէս. իսկ մէկաւր կրնայ փոփոխիլ ինչպէս բարեկարգութիւն մը: Ուրեմն հիմայ կրնանք հարցունել, կարելի՞ է որ բաղդատութեան եզր դրուին էպպէս մէկ մէկէ տարբեր երկու կէտ. մէկը սահմանաւոր, միւսը անսահման. մէկը մարդկային, միւսը գերմարդկային, մէկը փոփոխական, միւսը անփոփոխ: Տրամաբանութեան համեմատ է հաստատելը որ սահմանաւորը՝ անսահմանին եզր ցրցունէ. մարդկայինը պայմանագիր ըլլայ գերմարդկայնոյն: Պատրիարգական իրաւունքը որ կրնար ամենեւին չըլլալ, դրուի երբ սահմանակէտ եկեղեցւոյ գլխոյն գլխաւորութեանը, որնոր հարկաւ հաւատոյ Վարդապետութիւն է: Կըրնայ յԱստուծոյ հաստատած գլխաւորութիւնը, եկեղեցական սահմանադրութեանց ներքեւ իյնալ: Աս ըսելու համար կամ պէտք է ենթադրել, թէ Սրեւելեան չորս Պատրիարգաց սահմանադրութիւնը՝ ըլլայ Աստուածային իրաւունք. կամ թէ ուրանալ Հռոմիայ Քահանայապետին գլխաւորութեանը՝ յԱստուածային իրաւանց ըլլալը. երկուքնալ հակառակ Քրիստոնէութեան և Ուղղափառութեան դրութիւններ են: Ալ Պապանճեան Եպիսկոպոսին կիցնայ զորն որ կուզէ զայն ընտրէ:

Ը. Ահա ուրիշ դիտելու բան մ'ալ, երբ որ Փլորենտիոյ ժողովը կը խօսի չորս Արեւելեան Պատրիարգաց արտօնութեանց և իրաւանց վրայ, ստուգիւ չկրնար ըլլալ Հաւատոյ մասանց խնդրոյ մը նկատմամբ. այլ պարզ եկե-

դեցաւան բարեկարգութեան . որնոր անփոփոխ չէ Հաւատոյ Վարդապետութեան պէս, հապա փոփոխութեան ենթակայ . այսպէս կը սորվցունէ մեզ Տրամաբանութիւնը ու Քրիստոնէական Վարդապետութիւնը : Հիմայ անդամնք որ նոյն ժողովքը կը վճռէ հանդիսապէս թէ Սրբ . Պապերը յԱստուածային իրաւանց ունին գերազոյն իշխանութիւն ուղղելոյ և կառավարելոյ զընդհանուր եկեղեցին, կը հետեւի, որ նոյնպէս կրնան ուղղել և կառավարել նաև Պատրիարգութիւնները, որոնք ուրիշ բան չեն, եթէ ոչ եկեղեցական կարգադրութիւնք : Ասոր համար Սրբ . Պապերը իսկապէս 'ի գործ դրին այս իրաւունքը, վերածելով Կոստանդնուպոլսոյ Աթոռը 'ի Պատրիարգութիւն, և փոփոխելով աթոռոց կարգը, ևն ևն :

Ուստի Սուրբ Աթոռոյն գլխաւորութիւնը կը մնայ անվթար . և իր գերազոյն իշխանութիւնը Պատրիարքական աթոռոց վրայ, ամենեւին չնուազիր անոնց արտօնութիւնը և իրաւունքը պահուելով, որովհետեւ սոյն այս իրաւունքները և արտօնութիւնները նմանապէս Սրբ . Պապերուն գերազոյն իշխանութեան առարկայն կը կապմեն :

Թ . Գարձեալ, յիշեալ վճռոյն յօդուածը, խօսելով ի վերայ իրաւանց ու արտօնութեանց Պատրիարքներուն, անոնց ինչ ըլլալը չորոշէր, բայց եթէ առջի ժողովքներուն կը վերաբերէ : Մենք տեսանք թէ որոնք են Պատրիարքներուն իրաւունքները, զորն որ կը մասնաւորէ Լատերանեան ժողովքը, և թէ ինչպէս անոնք ներքեւ ինկած են Սրբ . Պապերուն իշխանութեան :

Ժ . Հետեւաբար, Փլորենտիոյ վճռոյն մէջ երկակողմեան պայմանագրութեան դաղափարը եւս չտեսնելէն զատ, ընդհակառակը կը գտնենք ամենորոշ յայտարարութիւն, Հռոմայ Քահանայապետաց գերազոյն իշխանութեան համար Արեւելեան Պատրիարգաց և եպիսկոպոսաց վրայ աչնպէս յայտնի, ինչպէս Արեւմտեան եպիսկոպոսաց վրայ : Այս առթիւ պատշաճ կը սեպենք մէկ ուրիշ կէտ մ'ալ նկատելու Գաղանձեան եպիսկոպոսին տարակին մէջ :

Գաղղիերէն օրինակին մէջ, որնոր ամեն Գեապանաց և պաշտօնատեսարց խրկուեր էր, կըսէ վեցերորդ երեւին մէջ . թէ Փլորենտիոյ ժողովքին մէջ, ընդունուեցաւ երկկողմեան պայմանագրութիւնը . և անմիջապէս երկու չափերով մէջ առած՝ կը յարէ . « Եթէ Արեւելեան Պատրիարգները այն թէսութեամբ կը ճանաչեն գլխաւորութիւնը Հռոմայ Քահանայապետներուն ընդհանուր եկեղեցւոյ վրայ . որ նոյնն ալ ճանչնայ Արեւելեան Պատրիարգաց յարակից իրաւունքը իրենց յատուկ աթոռներուն » : Այս չափերտանիչ մասը կարգաւրով, կը կարծը վի որ Փլորենտիոյ ժողովքին մէկ զրուցուածն է, բայց չկայ այն ժողովքին բնագրին մէջ այս տեսակ բան մը, չկայ և չկրնալ ըլլալ որ ասոր նման բան մը վճռեն ժողովքին Հայրերը . վասն զի այսպիսի դրութիւն մը զուտ հերետիկոսական է : Չենք կրնար ըմբռնել, թէ ինչպէս կը համարձակի Գաղանձեան եպիսկոպոսը բնագրի ձեւ տալ այնպիսի բառերու՝ որ միայն իր դրութեան նկարագիրն է, դէմ ընդդէմ հակառակ ժողովքին բովանդակութեանը :

Երբոր Լիոնի Տիեզերական ժողովքին մէջ Յունաց եկեղեցւոյ միութիւնը կատարուեցաւ, Միքայէլ Բալէոլոգ կայսրը ու Յունաց եպիսկոպոսները ազաչեցին զՎրեզոր Ժ . Պապը որ հրաման տայ իրենց եկեղեցական ձեւերը պահելու : « Ապա զչենք Ձեր մեծութեանը, ըսին, որ պահենք մեր հերձուածքէն առաջ ունեցած ձեւերնիս » : (Հարսուին . Հաւար . ժողովոց Ը . եր . 698) . նոյն բանը ուղեց Յոհաննէս կայսրը Փլորենտիոյ ժողովքէն ըսելով . « Մեր եկեղեցիներուն և ոչ մէկ ձեւը փոփոխուի » : (Հարսուին . Հաւար . Թ . եր . 395) : Բոլոր աշխարհք գիտէ, որ Սրբ . Պապերը չէ թէ միայն չեն ուղեր Արեւելեան ձեւերուն փոփոխութիւնը, այլ և սաստիկ հրամանաւ կը պատուիրեն որ պահուին :

ԺԱ . Գանք հիմայ Հայ ուղղափառ Պատրիարգութեան : Այս պատրիարգութիւնը, ինչպէս նաեւ հիմակուան ուրիշ Արեւելեան Պատրիարգութիւնները հին չորս մեծ Պատրիարգութեանց աւերակներուն վրայ կանգնուած են, Հիմայ թէ

որ մեծ ըսուած Պատրիարդութիւնները՝ չէին կարող սահման մը դնել Սբ. Աթոռոյն գլխաւորութեանը, կրնան փոքր Պատրիարդութիւնները զնոյնը կողարաւորել, Մանաւանդ որ Հայոս Պատրիարդութիւնը՝ մէկ ազգային Նախագահութիւն մը, կամ թէ ըսենք Աթոռոյի կողմէն մը նէ. ու նոյն իսկ Հայոց եկեղեցւոյն երեւելի վարդապետը Ներսէս Լամբրոնացին՝ չորս մեծ ըսուած Պատրիարդութեանց վերջը Հայոսներ կը դնէ: Գարձեալ Զըմմարի ժողովքը՝ զոր զուժարեց Պետրոս Թեոփիլոսը՝ յամին 1851, Աիլիկիոյ եպիսկոպոսներուն հետ, (որոնց մէջն էին նաեւ, երկու եպիսկոպոսունք, Պարպուսեան և Պահտիարեան, որոնք հիմա հերձեալ են,) բարձրաձայն կը սահմանէ, որ Հայոս Պատրիարդութիւնը մի միայն Սբ. Աթոռին պարտական է իր գոյութեանը համար. և անոր պատճառաւ Աստուան դնուած յոյս և Սնտիոքայ Աթոռներէն կախում չէ ունեցեր:

Ահաւասիկ այս ժողովքիս բուն իսկ բառերը: «Ով որ  
 « կուրանայ թէ Հայոց Պատրիարդութիւնը Սուրբ Աթոռ  
 « ուն հաստատուած չէ, կուրանայ միատեղ Հայոց իշխա  
 « նութիւնը և իրաւաբանութիւնը, վասն զի այդ պատի  
 « ւը և այդ իշխանութիւնը արուեստաւ մեր ազգին Հռով  
 « մայ Առաքելական Սբ. Աթոռէն, Սբ. Սեղբեսարոս  
 « Պապին օրովը: Երաւ է որ մեր Պատրիարդութիւնը ժո  
 « ղովքներէ հաստատուած չէ, ինչպէս Երուսաղէմիւնը ու  
 « Աստանգնուպոլիս, բայց առ ալ «բռնեց» մեզ ու շրջեց  
 « ցաւ ընդհանուր և Տիեզերական Գլխէն եկեղեցւոյ Յի  
 « սուսի Քրիստոսի, այսինքն Սբ. Սեղբեսարոս Հռովմայ  
 « Հայրապետէն: »

Յետ այսպիսի հռչակաւոր յայտարարութեան նոյն ինք  
 ընն Աիլիկիոյ Պատրիարդութեան ժողովքին, որն որ բաղ  
 կացեալ էր նախանձաւոր պաշտպաններէն Պատրիարդա  
 կան Աթոռին արտօնութեանց, Պաղանձեան եպիսկոպոսին  
 վերջի հրատարակումը՝ ոչ միայն ոճիր է թշնամանիչ Ազգ  
 դախաւորութեան, այլ և արհամարանք նոյն իսկ Աիլիկիոյ  
 Պատրիարդութեան:

Բայ սակից նաև Ազգերձ անուամբ նորահերձեալներէ

բուն քաջածանօթ գրուածքին մէջ, զորն որ հրատարա  
 կեցին 1869 ին ՚ի Աստանգնուպոլիս՝ Հերձուածքին որո  
 շուելէն առաջ, շատ կաշխատին ցրցունելու, թէ Հայ  
 Պատրիարդութիւնը Ս. Աթոռին բարեհաճութեամբն հաս  
 տատուած է: Միթէ Պաղանձեան եպիսկոպոսը կը կարծէ,  
 որ թոյլ արուի փոքր Պատրիարդութեանց այն բանը, զորն որ  
 մեծերը չունէին: Կամ թէ կուզէ ինքը հաստատել որ Սուրբ  
 Աթոռը շնորհք մը ուզելով ընել Հայոց Ազգին, չա  
 փաւորած ըլլայ իր գլխաւորութիւնը: Բայց ուզած ալ ըլ  
 լար, չէր կրնար. վասն զի չէր կրնար սահման դնել  
 կամ սոյման մէկ սահմանադրութեան մը, որն որ Աստ  
 ուածային է, ինչպէս որ է Սուրբ Աթոռոյն գլխա  
 ւորութիւնը. ուսկից կը հետեւի, թէ զայն սեղմել  
 կամ չափաւորելը Սբ. Պապերուն իշխանութենէն  
 գուր է:

ԺԲ. Մէկ ուրիշ մասնաւորութիւն մ'ալ դիտենք Հա  
 յոս Պատրիարդութեան վրայ. 1439 ին Փլորենտիոյ ժո  
 ղովքին հրաւիրանաց առնել, Հայերն ալ հաւատարապէս  
 հրաւիրուեցան Եւզինէոս Գ. Պապէն. բայց երբոր Աթ  
 թոյիկոսին և եպիսկոպոսներուն պատգամաւորները հա  
 սան, ժողովքը արդէն լինյած էր, ու Յոյնը դացեր էին  
 ՚ի Փլորենտիոյ: Ան ժամանակը Հայոց պատգամաւորնե  
 րը Եւզինէոս Գ. Պապին առջևն ելան, և Փլորենտեան  
 վճիռը ընդունեցան, և զրով այս յայտարարութիւնը ա  
 ւելցուցին: « Մենք՝ պատգամաւորքս յանուն մեր, և  
 « մեր երջանիկ Պատրիարքին և բոլոր Հայոց, ինչպէս որ  
 « Ձեր Սրբութիւնը ևս կը վիսյէ Կոնդակին մէջ, կընդու  
 « նինք և կը զրկենք յարգանօք և հնազանդութեամբ,  
 « զփրկարար վճիռը ժողովոյդ, իր բոլոր գլխակարգու  
 « թեամբ, յայտարարութեամբ, որոշողութեամբ, հրամանօք  
 « և այն ամեն սահմանադրութիւնք ու վարդապետու  
 « թիւնները զոր կը սորվեցնէ, և ինչ որ կը հաւատայ ու  
 « կուսուցանէ Առաքելական Սբ. Եկեղեցին և Աթոռն  
 « Հռովմայ, և մենք կը հրատարակենք որ պատրաստ  
 « եմք հաւատարմութեամբ հնազանդիլ, ճշմարիտ հնա

« զանդ որդւոյ պէս », կարգաց և հրամանաց Սբ. Աթոս  
« ոռոյն » (1) :

Անշուշտ է որ միայն հաւատոյ մասանց վրայ չէ  
պարզումաւորներուն խօսածը, հապա նաև բարեկարգա-  
կան սահմանադրութեանց վրայ, վասն զի ոչ միայն կը  
հրատարակեն թէ կը հաւատան վարդապետութիւնները,  
հապա կը խոստանան հնազանդիլ կարգաց և հրամանաց,  
որոնք չեն կրնար մասանց հաւատոյ համար ըսուիլ  
բայց եթէ բարեկարգական սահմանադրութեանց : Նոյն  
պատգամաւորները իրենց խօստմանցը համեմատ Եւզի-  
նէոս Պ. Հռովմայ Քահանայապետէն ուրիշ նիւթերու  
հետ միատեղ, բարեկարգական սահմանադրութիւններն ալ  
ընդունելով ետ դարձան :

ԺՊ. Ուրիշ դիտողութիւն մ'ալ : Ան յայտարարու-  
թեան կամ հաւաքական պատասխանին մէջ որ նորահեր-  
ձեւաց կղերը հրատարակեց Հոկտեմ. 14/26 1870 ին ու  
Պաղանճեան եպիսկոպոսը ուրիշ երեք նորահերձեալ ե-  
պիսկոպոսներով կը հաստատեն իրենց շրջաբերականովը  
սեպտեմբերի 24 ին և հոկտեմբերի 29, 1870, կըսէ ու  
կը հրատարակէ որ կընդունին Ուրբանոս Թեոփիլ Պա-  
պին հաւատոյ դաւանութիւնը : Պաղանճեան եպիսկոպո-  
սը թէ քահանայութեան և թէ եպիսկոպոսութեան ժա-  
մանակը, երեք չորս անգամ զնոյնը դաւանած ու երդ-  
մամբ հաստատած է. հիմայ այս հաւատոյ դաւանու-  
թեան ձեւին մէջ, ուր դրուած է Փլորենտիոյ Ժողով-  
քին վճիռը, կըսէ իբր հետեւանք. « բաց ասկից կը  
» խոստանամ ու կերդնում ճշմարիտ հնազանդութիւն Հռովմայ  
» Քահանայապետին ու յաջորդին երանելոյն Պետրոսի,  
» իշխանին առաքելոց և փոխանորդին Յիսուսի Քրիստո-  
սի » : Ուրեմն այս հաւատոյ դաւանութեան ձեւովը զորն  
որ ընդունել է Պաղանճեան եպիսկոպոսը, կապացուցուի  
որ զօրութեամբ Փլորենտիոյ Ժողովքի վճռոյն, Սրբեւե-  
լեան եկեղեցիները, ինքնիշխանութիւն և անկախութիւն  
չունենալէն զատ, պարտական են երդուըննալու ճշմարիտ

(1) Յուստին. դորձք. Փլոր. Ժողով. էջ 775.

հնազանդութիւն առ Սրբ. Պապն, որ է ըսել՝ չէ թէ  
միայն հաւատալ այն բանին զոր կը հաւատան Սրբ. Պա-  
պերը, այլ և հնազանդիլ անկեղծաբար իրենց տուած  
ամէն կարգադրութեանց և եկեղեցական սահմանադ-  
րութեանց : Ուստի « յորձեւ » զպապութիւնը խօսքե-  
րը չեն, որ Պաղանճեան եպիսկոպոսը արտասանեց Ուր-  
բանոս Ը. ի հաւատոյ դաւանութիւնը կարգալու ատեն՝  
երդուելով Սբ. Աւետարանին վրայ, այլ հնազանդիլ անկեղ-  
ծաբար : Եւ եթէ ուղենայ ըսել, որ այս երդումը ընելու  
ատեն, մտաց ամփոփմամբ մը, ինքը այնպէս ըմբռնած է  
թէ պէտք չէ անկեղծութեամբ հնազանդիլ, երբ Պապին  
տուած կարգադրութիւնը, համաձայն չէ եկեղեցական  
կանոնաց, կը հարցունենք իրեն. թէ ի՞նչպէս կը յանդըզ-  
նի քննիչ հանդիսանալ Սրբ. Պապերուն սահմանադրու-  
թեանց ու եկեղեցական կարգադրութիւններուն : Միթէ  
կը կարծէ՞, որ կարող ըլլայ ատեան մը կազմել գերադոյն  
քան զՍբ. Աթոսը, որ դատէ Անոր կարգադրութիւննե-  
րը, թէ արդեօք համաձայն են եկեղեցւոյ կանոնաց թէ  
ոչ. միթէ իրեն սեփականել կուզէ անսխալութիւնը ու  
դատելոյ գերագոյն իշխանութիւնը, զորն որ Պապերուն  
կուրանայ :

ԺՊ. Քիչ մ'ալ առաջ երթանք : Կը տեսնենք որ Պա-  
ղանճեան եպիսկոպոսին ու իրեն միաբանութեանը՝ որուն  
ինքը գլուխ և ընդհանրական Սբբայ զինքը կ'անուանէ,  
քանի մը տարի առաջ այսինքն 1865 Յունիսի Յին դաւա-  
նած վարդապետութիւնը՝ բոլորովին հակառակ է իրեն աս  
ետքի հրատարակած տետրակին վարդապետութեանը : Եւ  
իբօք, վասն զի նոյն տարուան ժամանակը մէկ հրապա-  
րակական Աստուածաբանութեան հանդիսի մը մէջ, իր  
միաբան կրօնաւորներէն մէկը՝ Հռոմայու Սբ. Ապոզինարի  
եկեղեցւոյն մէջ՝ Պաղանճեան եպիսկոպոսին առջեւ որ կը  
ներկայացունէր զմիաբանութիւնը, ու սաստիկ բազմու-  
թեան, որոնց մէջն էր նաև Էօմէր փաշան, որ նոյն ա-  
տեն Հռոմայէն կանցնէր, յանուն իւր մեծաւորին և միա-  
բանից, որոնց մեծ մասը հոն կը գտուէր, հանդիսապէս



պաշտպանեց ընդդէմ հերետիկոսաց և հերձուածողաց այն նախադասութիւնները, զորոնք պիտի դնենք հոս, հանելով այն տպած անտրակէն, զորոնցն ոչը Անտօնեան միաբանից մէկը՝ բաժնեց հանդիսագիրներուն: Ահաւասիկ յիշեալ նախադասութիւններէն մէկ քանին ասոնք են, զորս կը պաշտպանէր Անտօնեան Միաբանութիւնը, Յունիսի 8ին 1865. հանդիսապէս:

« Ժ. Վասն ունեւոյ և պահելոյ եկեղեցւոյ միութիւնը, Յիսուս Քրիստոս հաստատեց զՂիսաւորութիւն պատուոյ և իրաւաբանութեան:

« ԺԱ. Աւանդութիւնն ընդհանուր եկեղեցւոյ կը ճանչնայ և կընդունի այդ գերագոյն իշխանութիւնը՝ հաստատեալ ի Յիսուսէ Քրիստոսէ և յանձնեալ Երանելոյն Պետրոսի:

« ԺԲ. Սոյն այս ճշմարտութիւնը ապացուցած է անընդրելի յիշատակարանօք Հայաստանեայց եկեղեցւոյ:

« ԺԳ. Այդ զիսաւորութիւնը յԱստուածային իրաւանց՝ տրուեցաւ Հռովմայ Քահանայապետներուն, յայնչորդաց իշխանին Առաքելոյ, և հետեւաբար անոնց հաւտացուեցաւ ի Յիսուսէ Քրիստոսէ՝ յանձն Սրբոյն Պետրոսի՝ լիովին իշխանութիւն առաջնորդելոյ, ուղղելոյ և կառավարելոյ զընդհանուր եկեղեցին:

« ԺԴ. Եւ այս ապացուցուեցաւ, ու ընդունուեցաւ Փլյորենտիոյ ժողովքէն՝ թէ Լատինաց և թէ Արեւելեան Յունաց և Հայոց եկեղեցիէն:

« ԺԵ. Գլխաւորութեան իշխանութիւնը, զոր կը վայելէ Հռովմայ Քահանայապետը, է Եպիսկոպոսական իշխանութիւն մը, որ կը տարածի բոլոր հաւատացեալներուն վրայ հանդերձ Եպիսկոպոսներով. և իրաւամբ կընայ կոչուել Եպիսկոպոս Տիեզերական: (Ժամանակէ մը ետքը Պաղանճեան Եպիսկոպոսը իր վերը յիշուած շրջաբերականին մէջ կը դատապարտէ այդ « Տիեզերական Եպիսկոպոսի» անունը, իբրեւ անտեղի:

ԻԱ. « Հռովմայ Քահանայապետը իրաւամբ կը վայելէ գերագոյն իշխանութիւն՝ ոչ միայն իւրաքանչիւր

« Եպիսկոպոսաց վրայ, այլ խմբովին համօրէն Եպիսկոպոսաց վրայ, որոնք կը ժողովուին ի տիեզերական օրհնողոս, ուր թէեւ չեն ոչ փոխանորդը և ոչ պատգամաւորը, բայց կը վայելեն իրենց հարգանք իշխանութիւնը:

ԻԲ. « Տիեզերական ժողովքիմը զորոն որ Սրբ. Պապը կը հաստատէ, անսխալ է հաւատոյ և բարուց վրայ ըրած դատաստանը:

ԻԵ. « Նմանապէս հաւատոյ և բարուց վերաբերեալ դատաստանները՝ զոր Սրբ. Պապը ինքն ֆրանկոս կը վճռէ, իբրեւ վարդապետ ընդհանրական՝ անսխալ են նաեւ « յառաջ քան զԵպիսկոպոսաց հաւանութիւնը », (Երբոր ժամանակէմը ետքը Վատիկանու ժողովքը վճռեց սոյն այս անսխալութեան վարդապետութիւնը, ան ատեն Պաղանճեան Եպիսկոպոսը ու իրենիններն ալ իբր գայթակղած կը ձեւանային):

ԻԶ. « Այս (անսխալութեան) յատկութիւնը Սրբ. Պապերուն ատուղիւ կապացուցուի նաեւ աւանդութեամբ Արեւելեան և Արեւմտեան եկեղեցեաց »: (Քիչ մը ետքը պօռացին թէ անսխալութեան վարդապետութիւնը անձանօթ էր յԱրեւելք):

ԻԿ. « Պապը ունի իրաւունք պարտաւորիչ օրէնքներ հրատարակելու ընդհանուր եկեղեցւոյ համար »: (Այս վարդապետութեան բողոքովին հակառակ է վարչական երկուութեան դրութիւնը, զոր Պաղանճեան Եպիսկոպոսին հնարածն է և կը սորվեցունէ իր նոր տպած տետրակին մէջ):

ԻԳ. « Այս օրէնքներուն ուժը եկեղեցիին ընդունելէն չը կախուի:

ԻԹ. « Ինքն իսկ Սրբ. Պապն է եկեղեցւոյ գերագոյն և ընդհանրական դատաւորը, ուստի պէտք է իրեն յանձնել ու հաւատալ ամեն մեծագոյն խնդիրները:

Լ. « Ազատ է դիմել առ Սրբ. Պապն ամեն եկեղեցական խնդրոց մէջ, և որ դատաւորէ որ ըլլայ, իսկ ընդհակառակը թող տուած չէ ամենեւին, որ Սրբ. Պապին կտրած դատաստանին դէմ ընդհանուր ժողովքի բողոքուի:

(Վազանճեան եպիսկոպոսը ու իր հետեւողները հիմայ այս սկզբանց հակառակը բառ առ բառ կը հաստատեն) :

Աս էր Վազանճեան եպիսկոպոսին և իր միաբանութեան վարդապետութիւնը 1865 ին : Ինչ է արդեօք հիմակուան իրենց վարդապետութիւնը : Որչա՞նք քրիստոնէս :

Փառաւոր յիշատակագրութիւնը՝ զոր դրաւ Վազանճեան եպիսկոպոսը՝ իրենց Հռոմայու Սբ. Գրիգորի վանքը՝ ի յաւիտենական յիշատակ նոյն օրուան , այսօրուան օրս կը բողոքէ իրենց անկմանը և երդմնազանց ըլլալուն դէմ : Քարին , ազգայնացն :

Աւելորդ է աւելցնել մեկնութիւն մը այս ճարտարախօս վկայութիւններուն , որոնք անհրաժեշտ կը ցուցունեն որ ասոնք բոլորովին դասալիք եղած են հին դրօշակէն ուղղափառութեան , և իրենց նորահնար վարդապետութեամբ յիրաւի կոչուեցան Նորհեթեոս : Չենք ուզեր նաեւ ցուցնել թէ ինչպէս համարձակեցաւ Վազանճեան եպիսկոպոսը խարխուլ և թշուառ կոչել Ռէվերտուրուս կոնդակը , ինչպէս կարող եղաւ ըսել անոր համար , թէ Պապերուն Պատրիարքական իրաւաբանութեան զեղծումն է : Բայց աս չենք կրնար լռել , որ 1869 ին Վատիկանու ժողովքին մէջ եօթն հարիւր եպիսկոպոսաց առջին բոլորովին հակառակը դաւանեցաւ : Ենորհակալ եղաւ Սրբ. Պապին այն կոնդակը տալուն համար ըսելով թէ խարխիսի փրկութեան պիտի ըլլայ Սրբւելեայց ու իր գերագոյն իշխանութեան տմենագերազանց գործքը (ոչ պատրիարքական , այլ Պապական) այնպէս որ պէտք է ըսել թէ « մատն Աստուծոյ է անդ » :

Անձանց վրայ խօսիլ չենք սիրեր , և եթէ այս դէպքերը կը պատմենք , ուրիշ բանի համար չէ , բայց եթէ ցուցունել թէ ինչ « ինքնակրօն » կը դաւանէին Վազանճեան եպիսկոպոսը ու իր միաբանները մինչեւ այս ետքի տարիներս՝ իբրեւ ճշմարտութիւն մասանց հաւատոյ և ուղղափառութեան , զորն որ հիմայ մէկիւր նետեր են Հռոմէական ու անդրալեռնական դրութիւն անուանելով :

Յըցուցինք վերը ինչպէս Վազանճեան եպիսկոպոսը Փլորենտիոյ ժողովքին վճռոյն վրայ խօսելով կը ջանայ այլայլելով զբնագիրը , խանգարել անոր իմաստը ու նըշանակութիւնը : Աս ալ դիտեցինք որ զանց առած է յար և նման Լատերանու ժողովքին վճիռը առաջ բերել , որն որ նոյն խնդրոյն վրայ կը խօսի , և որուն կախնարկէ Փլորենտեան վճռոյն այս խօսքերը , « ինչպէս որ ասոնք սահմանադրած են Տիեզերական Ժողովքին գործոցը մէջ » : Այս զանցառութիւնը ուրիշ կերպ չկրնար ըլլալ , եթէ ոչ խորհրդածեալ ու կամաւոր . վասն զի Վազանճեան եպիսկոպոսը կը ջանայ ան այլայլած բնագրէն ուրիշ հետեւանք մը հանել , քան զոր կը նշանակէ բնականապէս հարազատ բնագիրը : Բայց որ աւելի զարմանալին է , ոչ միայն զանց կառնու յիշել Լադերանեան ժողովքին նմանակից վճիռը , հապա կը զգուշանայ եւս՝ բերանը չառնուլ Վատիկանու ժողովքը , որուն մէջը անձամբ գտնուած էր , ուր Փլորենտիոյ համբաւաւոր վճիռը , կրկին յիշուեցաւ , մեկնուեցաւ , ու մեկ նոր ու հանդիսաւոր հաստատութեամբ մը զօրացաւ , այնպէս որ ալ խարխութեան տեղ չմնաց : Վատիկանու ժողովքը , հաստատուած ըլլալով Սրբ. Պապէն , Տիեզերական ժողովք մըն է . ու իր բոլոր սահմանադրութիւնները , ուղղափառ կաթողիկեայց համար , հաւատոյ կանոններ են : Բոլոր աշխարհքիս եպիսկոպոսները ստորագրեցին իր որոշմունքները . և կրնանք ըսել որ ըստ ընդհանրութեան և այլ եւ այլ ծէսերու ու ազգաց բազմութեան նկատմամբ , Վատիկանու ժողովքը գերազանցեց բոլոր նախընթաց ժողովքները : Հիմայ , Վազանճեան եպիսկոպոսը կամ կը ճանչնայ Վատիկանեան ժողովքը , և ան ատեն պէտք է ինքը անոր սահմանածները ընդունիլ , կամ թէ որ չճանչնար , ինչո՞ւ զինքը կաթողիկէ Հայ արքեպիսկոպոս կանուանէ : Աւելի տրամաբանական չէ՞ր որ Վազանճեան եպիսկոպոսը Վատիկանու ժողովքին հետ մերժէր և Փլորենտիոյն , քան թէ խարխական դարձուածներով տատանէր լաբիւրինդոսի մէջ : Վատիկանու ժողովքը հանդիսաւոր թարգման մը եղաւ բոլոր ուղղափառ եկեղեցւոյ :

եթէ Պաղանճեան եպիսկոպոսը զայն չընանչնար, նովին կը բաժանէ զինքը ուղղափառութեան միութենէն: Տեսնենք հիմայ ի՞նչպէս ամբողջ ուղղափառ եպիսկոպոսունք՝ իրենց գլխոյն Սրբ. Պապին հետ առաջ բերին, և մեկնեցին ստէպ յիշուած Փլորենտեան վճիռը: Չորրորդ նիստին, երրորդ գլխոյն մէջ, Վատիկանու ժողովքը՝ Փլորենտեան վճռոյն բնագիւրը առաջ բերելէն ետքը, կը շարունակէ ըսելով:

« Մենք ալ կը սահմանեմք ու կը վճռեմք, որ Հը-  
 « ոովմայ եկեղեցին, Սատուածային կարգադրութեամբ,  
 « ունի գլխաւորութիւն կարգաւոր իշխանութեան ուրիշ  
 « ամեն եկեղեցիներուն վրայ. և այս իրաւաբանական կա-  
 « ռողութիւնը Հռովմայ Քահանայապետներուն՝ որ ար-  
 « դարեւ եպիսկոպոսական է, է նաև անմիջական. և սոյն  
 « այս իրաւաբանական կարողութեան՝ հարկաւ ամէն հովիւր»  
 « որ ծիսէ որ ըլլան և որ և է պատուոյ, և ամէն հաւա-  
 « տացեալք թէ իւրաքանչիւր առանձին, և թէ միաբան  
 « մեկ տեղ, պարտական են նուիրապետական ստորակար-  
 « զութեամբ, անկեղծաբար հնազանդել, ոչ միայն հա-  
 « լատոյ և բարուց վերաբերեալ բաներուն մէջ, այլ և  
 « անոնց, որոնք կը վերաբերին բարեկարգութեանց և վար-  
 « չութեան եկեղեցւոյ տարածելոյ ընդ ամենայն երեսո  
 « երկրի: »

Աւրեմն Վատիկանեան ժողովոյն վճռոյն համեմատ, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ պարզաբանութիւն Փլորենտեանին, ամենայն Ս. Էկեղեան առաջնորդք ո՛րք և իցէ, թէ և Պատրիարք ըլլան, պարտական են հնազանդել հըրամանաց Սրբ. Սթոուին, թէ որ չեն ուզեր Հերետիկոս ըլլալ և նշովեալ, ոչ միայն հաւատոյ և բարուց նիւթոց մէջ, այլ և վորջութեան և եկեղեցական բարեկարգութեան: Աս մեկ սահման մըն է հաւատոյ, որուն վրայ իրաւախոհ ըլլալ անկարելի է: Եւ այս վարդապետութիւնը կը յանդգնի՝ Պաղանճեան եպիսկոպոսը՝ հակառակ Քրիստոնէութեան զրպարտել: Թէ որ ասով ինքը ու իրենները՝ Հերետիկոսութեան յանցաւոր չեն, ուրիշ բան

չըմնար, բայց եթէ ինքը՝ որ պարզ եպիսկոպոս մըն է, նշովք կարդայ ընդդէմ Տիեզերական Վատիկանեան ժողովքին, և Հերետիկոս հրատարակէ 1200 Պատրիարգաց նախագահից, և եպիսկոպոսաց խումբը, որոնք զայն ստորագրեցին և նաև Սրբ. Պապին՝ որ անոր սահմանները հաստատեց:

Մինչեւ ցարդ Պաղանճեան եպիսկոպոսը չընշովէր զՍրբազան Պապը իններորդ Պիոսը, և ոչ իսկ Վատիկանու ժողովքը, այսինքն զՎատիկիէ եկեղեցին. տակաւին կը շարունակեն ինքը ու իրենները՝ պատարադներնուն մէջ յիշել զՊապը: Միթէ միամիտները խաբելու համար է: Բայց ուրիշ կողմանէ իրեն ետքի տետրակին մէջ, կը յանդգնի դատապարտել Վատիկանեան վարդապետութիւնը իբրեւ հակառակ Սատուածային և եկեղեցական օրինաց. և անով ամբաստանել իբրեւ Հերետիկոս զՊապը և զհազար երկու հարիւր կաթողիկէ աշխարհքին եպիսկոպոսները: Պէտք է գիտնալ Պաղանճեան եպիսկոպոսը, որ Հռովմայու արքունիքը չէ, ինչպէս ինքը կուզէ ըսել, այլ եկեղեցւոյ դուխը ամբողջ եպիսկոպոսներով, որք սահմանեցին այն վարդապետութիւնը, որն որ բառ առ բառ հերքումն է իր տետրակին: Եթէր ստարի առաջ, որ դեռ Վատիկանու ժողովքը չէր հրատարակուած, ինքը Պաղանճեան եպիսկոպոսն ալ ընդունած էր այս վարդապետութիւնը. զարմանալու բան չէ՞ որ հրատարակուելէն ետքը զայն կուրանայ: Վասն զի նորէն կըսենք որ իր տետրակին սորվըցուցած վարդապետութիւնը յայտնապէս ուրացումն է ոչ միայն Վատիկանու, այլ նոյն ինքն Փլորենտիոյ և Վատերանու վճիռներուն: Փլորենտեան վճիռը՝ նախ քան իր հրատարակումը 224 տարի առաջ, Վատերանեան Տիեզերական ժողովքէն հըրատարակուեցաւ. և 431 տարի իր հուշակուելէն աետքը, միւսանդամ մեկնաբանեցաւ և պարզեցաւ Վատիկանեան ժողովքէն: Սհաւասիկ մի և նոյն վարդապետութիւնը, զոր իրեք Տիեզերական ժողովքները կը դաւանին, կը սորվըցունեն և կը բացատրեն, և Պաղանճեան եպիսկոպոսը կը յանդգնի ուրանալ:

Գ .

Որովհետեւ Պաղանճեան եպիսկոպոսը՝ կրօն է Սրբ-  
 ւելեան Եպիսկոպոսաց և Պատրիարգաց ընտրութիւնը ժո-  
 ղովորեան կը վերաբերի, և անոր կանոնները առանց կախու-  
 մըն ունենալու Սբ. Պահէն աղատ են Սբբ. Պապերուն թէ՛ Քա-  
 հանայապետական գլխաւորութենէն, և թէ պատրիարգական  
 իշխանութենէն, աղէկ կը լլայ որ աս նիւթիս վրայօք ալ քիչ մը  
 խնդիրը լուսաւորենք, կանոնական և պատմական տեսու-  
 թեամբ : Վասն զի իբրեւ «կրօն» մենք արդէն յայանեցինք և  
 ցուցուցինք՝ որ նուիրապետական ընտրութիւնները՝ մասն են  
 եկեղեցական բարեկարգութեան . և թէ բարեկարգութիւնը  
 ստորանկեալ է Սբբ. Պապերուն լիութի և ընդհանրական  
 իրաւաբանութեան, եթէ յարեւելք, և եթէ յարեւմուտս .  
 հետեւաբար նուիրապետական ընտրութիւններն ալ պէտք  
 է որ բոլորովին իրեն վերաբերին : Ուրեմն մենք հիմայ  
 խօսինք նուիրապետական ընտրութեանց վրայ, կանոնա-  
 կան և պատմական տեսութեամբ : Եւ խիստ հարկաւոր կը  
 կարծենք՝ որ այս խնդրոյս համար, որն որ գլխաւոր նիւ-  
 թըն եղեր է կաթողիկէ Հայոց խնդրոյն, մասնաւոր յօդ-  
 ուած մը գրենք :

Սմենէն առաջ բերենք ութերորդ Կոստանդնուպոլ-  
 սոյ Տիեզերական ժողովքին ԺԲ . հռչակաւոր կանոնը, վե-  
 րաբերեալ ընտրութեանց Պատրիարգներուն, Մետրապո-  
 լիաներուն, և եպիսկոպոսաց :

Ս,յս համբաւաւոր վճիռը Սրբազան օրէնք մը հաս-  
 տատեց այս նիւթիս համար . ուսկից կը յայտնուի թէ ի՞նչ  
 է Քրիստոնէական եկեղեցւոյ ոգին՝ այս ընտրութեանց կէ-  
 տին վրայ : Ահաւասիկ սահմանը :

Կանոն ԺԲ . « Ս,յս Սբ . և Տիեզերական ժողովքս կը  
 » վըճուէ և կը սահմանէ, որ հին ժողովոց համեմատ՝ եպիս-  
 » կոպոսաց որոշուիլը և ձեռնադրութիւնը լլայ ընտրու-  
 » թեամբ և վճուով եպիսկոպոսաց սինոդին . և միանգա-  
 » մայն կը հրամայէ յիրաւանց, որ աշխարհական իշխան մը

» կամ հրամանատար պէտք չէ որ խառնըվի ընտրութեան  
 » կամ հաստատութեան Պատրիարքի, Մետրապոլիտի և Ե-  
 » պիսկոպոսի ուլ որ լլայ, որպէս զի ասանկով ամեն շփո-  
 » թութեանց և անպատշաճութեանց որոնք կրնան հետեւիլ,  
 » առջևն առնըվի . մանաւանդ որ ամենին չըվայելէր՝  
 » որ իշխանք և ուրիշ աշխարհականք նաեւ ամենափոքր ի-  
 » ըրաւունք մը ունենան այսպիսի նիւթոյ մէջ . ընդ հակա-  
 » աակը՝ պէտք են լուել ու սպասել, մինչև որ եպիսկո-  
 » պոսաց սինոդը կարգաւորապէս լըմընցունէ հայրապետին  
 » ընտրութիւնը : Եւ եթէ երբեմն մէկ աշխարհական մը  
 » Եկեղեցիէն կը հրաւիրուի, բանի մը վրայ խորհրդակ-  
 » ցելու համար, և իրեն ձեռնադրութիւնը ուղերու, պէտք  
 » է ամենայն ակնածութեամբ և հպատակութեամբ վար-  
 » ւիլ եպիսկոպոսաց ժողովքին հետ . . . : Որ և է իշխան  
 » հրամանատար, կամ աշխարհիկ անձը որ և է աստիճանի  
 » համարձակի այս հասարակաց ժողովական և կանոնական  
 » օրինաց դէմ գործել, նզովեալ լլայ մինչև որ հպա-  
 » տակի եկեղեցւոյ որոշմանը, յընտրութեան և ի հաս-  
 » տատութեան Եպիսկոպոսին » :

Պաղանճեան եպիսկոպոսը կրնայ տեսնել՝ որ ինչպէս  
 այս ժողովական սահմանադրութեան ձեւը ու հոգին նկատ-  
 մամբ նուիրապետական ընտրութեան, տարբեր են իր  
 տեարակին մէջի յիշածէն :

Բայց կուզենք նաև սլատմաբար հերքել Պաղանճեան  
 եպիսկոպոսին պահանջմունքը որ կուզէ հաւատացունել  
 թէ Սրբեւելեայն նուիրապետական ընտրութիւնը, միշտ ա-  
 ռանց իշխանութեան Սբ . Աթոռին եղած է . աս ենթա-  
 դրութիւնը բոլորովին պատմութեանց հակառակ է :

Վասն զի 431 ամին, երբոր զՍբ . Աթանասը Աղեքօ  
 սանդրիոյ պատրիարգութենէն ձգեցին Սրիոսեան եպիս-  
 կոպոսները, Սբ . Յուլիոս Ա . Պապին հրամանաւը նորէն  
 հաստատուեցաւ : (Սողոմէն . գիրք Գ . Գլ . 2) :

Եւ երբ Սբ . Յոհան Ոսկեբերան Կոստանդնուպոլսոյ  
 Պատրիարքը՝ աթոռէն վըռնտուեցաւ Եգիպտացի եպիսկո-  
 կոպոսներուն ձեռօք, զիմեց Իննովկենտիոս Ա . Պապին .

որ իր նամակովը՝ զոր գրեց կղերին ու ժողովրդեան Առաքանդանուսուպօլսոյ, շրեց չարաժողովոյն վճիռը, և հաստատեց նորէն զՍբ. Պատրիարքը իր աթոռին վրայ (նամակ. Իննով. առ Յով. Ոսկեր.): Թէ Սբ. Յ. Ոսկերեբրանը ինչ աստիճան կը ճանչնար Սբբ. Պապին վարչական և դործադրական իշխանութիւնը, աօ գրածէն կերևայ: « Որովհետեւ (Առաքանդանուսուպօլիս) պատահած դէպքերը, կըսէ, » ոչ միայն լալու արժանի են, այլ և կարօտ են կշտամբութեան, անոր համար կաղաչեմ ձեր գթութիւնը, » արթընցէք, ու բարեհաճեցէք ցուցունել ձեր իշխանութիւնը՝ ինչպէս որ կը վայելէ... գրել հաճեցէք, կաղաչեմ զձեզ, և հրատարակեցէք որ հոս պատահած գործքերը ամենեւին բանի մը չեն արժեր, և որոնք որ համարձակեցան այս ոճիրները գործելու, դատապարտուելէն ետքը՝ եկեղեցական պատժոց տակ իյնան: (Նամակ Ոսկեր. առ Իննով.):

Սբն. Կիւրեղ Աղեքսանդրիոյ Պատրիարքը, յամին 434, գրելով առ Սբ. Կեղեասինոս Պապը, կաղաչէ պատուիրել Երուսաղէմի Յորնաղ եպիսկոպոսին, որ Պաղեստինոյ դաւառին մէջի արտօնութիւնները չյափշտակէ (1):

Սբ. Լէոն Պապը, յամին 433, յունիսի 11, կը հաստատէ Անտիօքայ Մաքսիմոս պատրիարզին՝ իր բոլոր եկեղեցւոյն արտօնութիւնները: (2)

Նոյն Լէոն Պապը մէկ ուրիշ թղթով մը՝ ի 434, մայիսի 10, հաստատեց Աղեքսանդրիոյ եկեղեցւոյն արտօնութիւնները: (3)

Բայց չհաստատեց այն առաւելութիւնները, զոր Քաղկեդոնի ժողովոյն եպիսկոպոսները աղաչեցին որ շնորհէ Առաքանդանուսուպօլսոյ Աթոռին, յամին 431. (4), թէպէտ և այս բանիս համար՝ աղաչանաց թուղթ գրեցին Առաքանդանուսուպօլսոյ եպիսկոպոսը Անագոլ, և կայսրը Մարկիանոս. (5):

(1) Կուղան. Նմկ. Հոով. 1638. Եր. 504:  
 (2) Գործ. Ս. Լէոնի. Հատ. 1. Յօդ. 1212. Տպ. Բասիլ:  
 (3) Գործ. Ս. Լէոն. Հատ. 1. Յօդ. 1255:  
 (4) Անդ. Հատ. 1. Յօդ. 1121:  
 (5) Անդ. Հատ. 1. Յօդ. 1121-1112:

Ահաւասիկ Պօլսոյ Պատրիարզին առ Սուրբն Լէոն գրածը՝ « Առաքանդանուսուպօլսոյ աթոռը՝ Հայր կը ճանչնայ իրեն Ձեր » Առաքելական Աթոռը, որուն հետ ամենակատարեալ » կերպով կապակցեալէ »:

Սուրբն Գամատոս Պապը իր առաքելական իշխանութեամբը՝ ձգեց Աթոռէն Փլաբիանոս Անտիօքայ Պատրիարքը. ինչպէս որ կը գրէ Հռովմայ կողմնակից չեղող Թէոտորեոս պատմագիրը (գիրք Ե. Գլ. 23): Նոյնպէս Հռովմայ Աթոռոյն կողմնակից չեղող ուրիշ Յոյն պատմիչ մը Սողոմէնոս (Գիրք Գ. Գլ. 25). կը պատմէ որ Գամատոս Պապը իր գերագոյն իշխանութեամբը՝ ձգեց Աթոռէն Ապողինար Լաւդիկեայ եպիսկոպոսը (փոքր Ասիոյ մէջ). ու իր աշակերտը Տիմոթէոսը Աղեքսանդրիոյ եպիսկոպոսը: Նիկիոլայոս Ա. Պապը իր նամակին մէջ որ կը գրէ առ Բիւզանդիոյ կայսրը Միքայէլ, ութ Արեւելեան Պատրիարզներ կը համրէ, որոնք ինկած են իրենց Աթոռէն իշխանութեամբ Հռովմայու առաքելական Սբ. Աթոռոյն:

Գալով եպիսկոպոսաց ընտրութեան յԱրեւելս, Կղեմէս Ա. Պապը իր հռչակաւոր նամակին մէջ առ Կորնթացիս, առաջին դարու մէջ, բաց ՚ի շատ մը բարեկարգական կանոններէն, Խթ. երրորդ գլխոյն մէջը եպիսկոպոսաց ընտրութեան վերաբերեալ կանոններ կ'աւանդէ և պահել կը հրամայէ. (1) և այս կոնդակը՝ խիստ համբաւաւոր եղաւ Արեւելքի մէջ, ինչպէս կը պատմէ Եւսեբիոս. (Պատմ. Եկեղ. Գիրք Գ. Գլ. 16:) մինչեւ երեւելի օրերը կը կարգացուէր ոչ միայն Կորնթոսի Եկեղեցւոյ մէջ, այլ և Արեւելեան շատ եկեղեցիները:

Իննովկենտիս Ա. Պապը, իր գրած նամակին մէջ առ Աղեքսանդր Անտիօքայ եպիսկոպոսը յամին 415, կը նշանակէ նախ, եպիսկոպոսաց ձեռնադրութեան կանոններ: Երկրորդ, թեմերուն բաժանման մէջ՝ չըհետեւիլ քաղաքական սահմանադրութեանց: Երրորդ, հրահանգ կատայ անոր՝ Կիպրոսի արիոսեան եպիսկոպոսներուն ձեռ.

(1) Պարթ. Եկեղ. Իրաւ. Յունաց. Հատ. Բ. Եր. Դ.

նադրութեան վրայօք, և կապսպըրէ անոր որ ճշդիւ զա-  
նոնք պահէ (1) :

Սարգիկեայ ժողովոյն Հայրերը (Սոփիա 'ի Պուլկա-  
րեստան) որ գրեթէ ամբողջ Արեւելեան Հայրապետներէն  
էին, հրատարակեցին Միւնոդոսական կերպով, որ ո՛ր և է-  
ցէ քաղքի եկեղեցականները, որոնք գանդատ մը ունենան  
իրենց Մետրապօլիտներէն, կամ դաւառական ժողովքէ  
ձգուած ըլլան իրենց պաշտօնէն, պէտք է դիմեն առ Ա-  
ռաքելական Աթոռը Հռոմայու : Ժողովական թուղթեր-  
նուն մէջ զոր ուղղեցին առ Յուլիոս Ա. Պապը, յամին 347,  
այսպէս կը գրեն. «Ամենեւին պարտ և պատշաճ է որ  
Եկեղեցականը իւրաքանչիւր դաւառներէն դիմեն առ Գը-  
լուին, այսինքն առ Աթոռն Պետրոսի Առաքելոյ» . (Եւ-  
սեբ. Եկեղ. Պատմ. Գիրք Ա. Գլ. 5 .

Սբ. Լէոն Պապը իր թղթին մէջ յամին 445, յու-  
նիսի 21, կը գրէ Ռիսկոյոսի Աղեքսանդրիոյ եպիսկո-  
պոսին, ու կը հրամայէ որ եպիսկոպոսներու ընտրութեան  
մէջ, Հռոմայ եկեղեցւոյն սահմանած կանոններուն հե-  
տեւի » : (2)

Կալէնտինոն Անտիոքայ եպիսկոպոսը՝ ձեռնադրուած  
ըլլալով Ակակիոս Պօլսոյ եպիսկոպոսէն Նիկիոյ ժողովոյն  
կանոնաց դէմ, Զենոն կայսր աղաչեց Միմպլիկիոս Պա-  
պին, որ իր Առաքելական հաստատութիւնը տայ, զորն  
որ տուաւ Պապը զիջանելով անոր աղաչանացը 482 Յու-  
նիսի 22 . (3) .

Յամին 533, Յուստինիանոս կայսրը աղաչեց Սբ. Ա-  
գապեղոս Պապին : որ Արիոսեան քահանայից և եպիսկո-  
պոսաց նուիրապետական պատիւները, զորն որ ընդու-  
ներ էին իրենց հերետիկոսութեան ժամանակը, յետ  
դառնալնուն յուղղափառ հաւատս . նոյն պատուոյ աստի-  
ճանները պահուին, բայց Սբբ. Պապէն բացասական

(1) Կուգան . Թուղթ . Հռոմ . Քահ . Յօդ . 851 . Գլ . Բ .  
(2) Գործք . Ա . Լէոն . Հատ . Ա . Յօդ . 625 :  
(3) Յաֆֆէ . Կարգ . Հռոմ . Քահ . Թիւ 532 :

պատասխան առաւ . որ է ըսել Պապը չընդունեցաւ այդ  
խնդիրը : (1)

Երբոր 553 ին Կ. Պօլսոյ Բ . ժողովքին մէջ յիշատա-  
կուեցաւ աթոռընկեցութեան վճռոյն խնդիրը . զոր Ա-  
գապետոս Պապը տուեր էր, Յուստինիանոսի ատենը Կ .  
Պօլսոյ Պատրիարքին Անդիմոսի դէմ, ժողովքը այսպէս  
կըսէ . « Ագապետոս Պապը աթոռընկեց ընելով զԱնթի-  
» մոս, ոչ երբէք յափշտակեց ուրիշ իրաւունքը, վասն  
» զի օրինաւոր իշխանութեամբը գործեց . իր Առաքելա-  
» կան իշխանութեամբը վրէժխնդիր եղաւ Պօլսոյ աթո-  
» ոսոյն եղած անիրաւութեանը » (2) : Մէկ տիեզերական  
ժողովմբնէ որ կը ճանչնայ Հռոմայ եպիսկոպոսին ու-  
նեցած իշխանութիւնը աթոռընկեց ընելու զՊատրիարգ-  
ները, և վրէժ առնուլ եկեղեցւոյ դէմ եղած անիրա-  
ւութեանց, ոչ միայն յԱրեւմուտս, այլ և յԱրեւելս :

Երբ Փոտիոսին տեղ նստաւ Կ . Պօլսոյ Պատրիարգա-  
կան աթոռը, Լէոն կայսեր Ստեփան եղբայրը, կայսրը  
գիտնալով որ իր եղբայրը անկանոնութեան մէջ ինկած  
է՝ Փոտիոսէն սակաւագ ձեռնադրուած ըլլալուն համար,  
առաջարկեց ուղղափառ եպիսկոպոսաց՝ որ գրեն առ Սբբ.  
Պապն, որպէս զի արձըկէ զինքը յեկեղեցական բանա-  
դրանաց : Եւ ինքը կայսրը այսպէս կը խօսի Հայրապե-  
տաց « Որովհետեւ առանց իշխանութեան Հռովմայ եկե-  
» կեղեցւոյն, որ նզովեց զՓոտիոս, չէք կրնար դուք  
» հաղորդիլ իմ եղբօրս հետ, Փոտիոսէն սարկաւագ ձեռ-  
» նադրուելուն համար, աղաչանաց թուղթ գրենք 'ի Հը-  
» ուովմ առ Պապն, որպէս զի հաճի արձըկել կապանքէ  
» զանոնք, որ ձեռնադրուած են Փոտիոսէն » (3) :

Նոյնպէս Կ . Պօլսոյ կայսերը Վասիլ, Կոստանդին  
և Լէոն յամին 871 . առ աղաչանքս ըրին Ադրիանոս  
Պապին : « Մեր հայրը և Պատրիարքը մայրաքաղաքիս (Սբ .

(1) Մանսի ժողով Բ . 850 :  
(2) Լապպէ . Հաւաք . Ժող . Գործ . Ժող . Կապլ .  
(3) Աստեմանի . Մատեն . Արեւել . Իրաւանց . Հատ . 1 . Եր . 296 :

« Իգնատիոսը) աղաչեց զմեզ որ գրենք Ձեր Սրբութեանը, որպէս զի անօրինէք անոնց՝ որ Փոտիոսէն ձեռնադրուած են, ոմանց վերանալ ՚ի բարձրագոյն աստիճան, և ոմանց դարձեալ հաստատուիլ իրենց աթոռը (1):

Նոյնպիսի աղաչանաց զիր խրկելէցաւ առ Ստեփաննոս Պապը, յամին 886 և 889, ժողովական թղթով մը զոր գրեց Նէոկեսարիոյ Մետրապօլիտը Ստիլիանոս, և ուրիշ շատ Ասիացի եպիսկոպոսներ:

Յիշեալ Արեւելեան Արքեպիսկոպոսունք և եպիսկոպոսունք այսպէս կաղաչեն զՊապը ըսելով: « Կը փութանք նորէն աղաչել Ձեր Սրբութեանը, այն եպիսկոպոսաց համար, որ բռնադատեալ հարկեցան ճանչնալ զՓոտիոս, որ բարեհաճիք շրջաբերական թուղթ խրկել Արեւելեան Պատրիարքներուն, որ ճանչնան Ձեր անօրինութիւնը: »

Արեւելեայց աս աղերսագրին, Ֆորմոզ Բահանայապետը յաջորդն Ստեփաննոսի, որ ան միջոցին մեռեր էր, այսպէս կը պատասխանէ, « ուղենալով զթութեան ճամբան բռնել անոնց՝ որոնք որ Փոտիոսէն ձեռնադրուած են, կը հրամայենք որ աղաչանաց թուղթեր գրեն, և խոստովանին մեղքերնին, և ներումն խնդրեն ապաշխարանօք, և խոստանան՝ որ այլ չգործեն այնպիսի սըխալանք մը, երբ որ աս ամէնը կատարեն, Ձեր Սրբութիւնը, Մեր հրամանագրովը. կարենայ անօրինել ՚ի նչպէս վերը ըսինք, առանց բան մը աւելցունելու կամ փոփոխելու: » (2)

Սրբ. Պապերուն գերագոյն իշխանութիւն ունենալը Արեւելեան և Արեւմտեան Պատրիարդաց և եպիսկոպոսաց վրայ, ուղղակի կամ Առաքելական նուիրակի ձեռօք, ապացուցուած է, նաև շատ պատմական դէպքերէ:

Յամին 342. Յուլիոս Ա. Պապը, Աղեքսանդրիոյ Պատրիարք Սբ. Աթանասէն զատ, վերստին հաստատեց իրենց աթոռին վրայ Անկիւրիոյ Մետրապօլիտը Մարկելոս, և Պողոս Կոստանդնուպօլսոյ Պատրիարքը, զորոնք

(1) Բարոնիոս. Տար. եկ. յամին 871.

(2) Նոյն յամին 891. Թ. 6

Արեւելեան ժողովքը աթոռնկէց ըրեր էր: Այս դիպուածքիս վրայ վերոյիշեալ Յոյն պատմագիրը Սողոմոնոս [(Գիրք Գ. Գլ. 7) այս յիշատակաց արժանի խօսքերը գրած է: « Որովհետեւ իր աթոռոյն գերագահութեան զօրութեամբը՝ բոլոր եկեղեցիներուն հոգը իրեն (չը ուովմայ եպիսկոպոսին) կը վերաբերի, անոր համար՝ ամեն մէկը իր եկեղեցին դարձուց: Արեւելք եղող եպիսկոպոսաց թուղթեր ալ զրեց յանդիմանելով զիրենք, որ յիշեալ եպիսկոպոսաց դատը անիրաւաբար տեսած ըլլալով, եկեղեցական կարգը վրդոված էին: Աթանաս և Պողոս դարձան իրենց աթոռը, և ներկայացուցին Արեւելեան եպիսկոպոսաց Յուլիոս Պապին թուղթերը: »

Նմանապէս Յամին 362, երբ Եւստատիոս Անախորայ Պատրիարքը մեռաւ, Արիոսեանք անոր տեղը Եւզոյոս անունով մէկը ընտրեցին. միւս կողմանէ Ուղղափառները զՄելիտոս ընտրեցին: Սրբ. Պապին նուիրակները, որ էին Լուկիփէր Կալարիտայի, ու Եւստեբիոս Վերչելլի եպիսկոպոսները, երկուքնալ Լատին եպիսկոպոսունք՝ որ ան տեսն յԱրեւելս կը գանձէին, ոչնչացուցին երկու ընտրութիւնն ալ, ու փոխանակ իրենք ընտրեցին զՊաուլինոս, զորն որ հաստատեց Սբն. Դամասոս Պապը: (1)

Թէոդոս Կայսրը յամին 382, դեպքան խրկեց նոյն Սբ. Դամասոս Պապին, խնդրելով անկէց որ զՆեկտարիոս Կ. Պօլսոյ եպիսկոպոսը հաստատէ: (2)

Յամին 414, Իննովկենտիոս Ա. Պապը կը գրէ Մաքսիմիանոս եպիսկոպոսին, որ չթողու հաղորդակցիլ իրեն հետ Ատտիկոս Կ. Պօլսոյ եպիսկոպոսը, եթէ ըզնոյնը չը խընդրէ յայտնապէս միջնորդութեամբ նուիրակաց: (3)

Յամին 430, Սբ. Կեղեատինոս Պապը հրամայեց Սբ. Կիւրղի Աղեքսանդրիոյ Պատրիարքին, որ զՆեստոր Կ. Պօլսոյ Պատրիարքը ձգէ աթոռէն, և ուրիշ եպիսկոպոս մը դնէ անոր տեղը:

(1) Բարոնիոս յամին. 362 Թ 215.

(2) Մանսի, Հաւաք. Ժողո. Յօդ. 1031.

(3) Կուղան. Թուղթ Համ. Բահ. Յօդ. 1045.

Ահաւասիկ Սրբ. Պապին հրամանատարութեան թուղթը զոր խրկեց Սբ. Կիւրղի՝ որ Արեւելքի երեւելի Պատրիարքայ մէկն էր, որ աթուղնիկեց ընէ ու ուրիշ Պատրիարք մ'ալ ընտրէ իւր անունովը:

« Զօրութեամբ իշխանութեան աթուղոյս մերոյ, կը  
» գրէ Սրբ. Պապը, խրկած հրամանագրովս սաստկա-  
» պէս կատարէք մեր վճիռը, այսինքն եթէ (Նեստոր  
» Կ. Պօլսոյ Պատրիարքը) աւան օրուան մէջ՝ դաւանու-  
» թեամբ հաւատոյ զոր գրով պէտք է որ տայ, չըբաս-  
» պարտէ իր մոլորական քարոզութիւնները, անմիջապէս  
» Զեր Սրբութիւնը ուրիշ մը դնէ այն (Պօլսոյ) աթուղին  
» վրայ » (1):

Նոյն Սրբ. Պապը իր 432 Մարտի 13 ին գրած նա-  
մակովը կը հաստատէ Եփեսոսի ժողովքին մէջ եղած  
Մաքսիմիոսի ընտրութիւնը (2),

Յամին 436 Սեքստոս Գ. Պապը՝ ձգեց աթուղէն Պո-  
ղիկոն Երուսաղէմի Պատրիարքը ձեռամբ իր Լէոն սար-  
կաւագին, որ աս բանիս համար Երուսաղէմ խրկէր էր (3):

Իրիսկորոս Աղեքսանդրիոյ Պատրիարքը, յամին 449  
Եփեսոսի ժողովակին մէջ, ձգեց զԴիմնոս եպիսկոպոսը իր  
Անտիոքայ աթուղէն, և անոր տեղը դրաւ Մաքսիմոս ե-  
պիսկոպոսը, թէպէտեւ ասոր ընտրութիւնը անկանոն էր  
բայց Սրբ. Պապը Լէոն տնօրինելով հաստատեց զինքը:  
Անոր համար Հարք Քաղկեդոնի տիեզերական ժողովքին  
յամին 452, թէպէտեւ Եփեսոսի ժողովակին բոլոր գործ-  
քերը փճացուցին, այլ օրինաւոր սեպեցին Մաքսիմիոսի  
ընտրութիւնը, միայն անոր համար որ Հրամայոս Պապը Սբ.  
Լէոն զայն հաստատեց (4):

Նոյն Սրբ. Լէոն Պապը՝ թէոտոր կայսեր և Բուլղե-  
րիա թագուհւոյն աղաչանաց համար, հաստատեց յամին  
450 Անատոլ Կ. Պօլսոյ եպիսկոպոսին ընտրութիւնը.

(1) Կուղան. Թուղթ. Հո. Քահ. Յօդ. 1202;  
(2) Անդ.  
(3) Գործք. Սիքստ. Հաւաք. Ժողովոյ:  
(4) Մանսի. Հաւաք. Ժող. Էջ. 252-270.

բայց այնու դաշամբ որ իրեն առաջարկուած հաւատոյ  
դաւանութիւնը յայտնապէս ընդունի և դաւանի: (1)

Գարձեալ նոյն Քահանայապետը իր նամակովը յա-  
մին 457 Սեպտեմբերի 1 յանդիմանեց զՔարսեղ Անտիո-  
քայ Պատրիարքը, իր ընտրութեան հաստատութիւն  
ինդրելը ուշացնելուն համար (2):

Մէկ ուրիշ թղթով մը յամին 460 Ապրիլի 18, հաս-  
տատեց Տիմոթէոսի ընտրութիւնը՝ Աղեքսանդրիոյ Պատ-  
րիարքական Աթուղոյն վրայ (3):

Ի 482 ին Սրբ. Սիմիկիոս Պապը մերժեց Աղեքսան-  
դրիոյ գղերին աղաչանքը, որ ժողովական թղթով աղա-  
չէր էր, որպէս զի հաստատէ ընտրութիւնը Յովհաննէս  
Բրասկիգ եպիսկոպոսին, նոյն քաղաքին Պատրիարքական  
աթուղին համար, վասն զի Սրբ. Պապը անարժան դտած  
էր այն անձը այնպիսի արժանապատուութեան (4):

Սրբ. Ռոմիզդ Պապը յամին 520. յանդիմանեց զԵ-  
պիփան Կ. Պօլսոյ Պատրիարքը, իր ընտրութեան հաս-  
տատութիւնը առնելու անհոգութիւն ընելուն համար:  
Եպիփան մեկէն ինդրեց իր հաստատութիւնը և ընկա-  
լաւ (5):

Սրբ. Ակապետ Պապը, զրեց մեկ թուղթ մը 536 ին  
առ Պետրոս Պատրիարք Երուսաղէմի, իմացունելով որ  
զԱնթիմոս Կ. Պօլսոյ Պատրիարքը ձգած էր Աթուղէն: (6)

Նոյն Սրբ. Պապը՝ ի Կ. Պօլսի դանուելով, աթուղնիկեց  
Պատրիարքին տեղ զՄեննաս անուանեց և ինքը զայն  
ձեռնադրեց Սրբ. Մարիամ Մայր եկեղեցւոյն մէջ: (7)

Երբոր Ելէանորա Թագուհին աղաչեց զՍրբ. Սիրիլերիոս  
Պապը՝ յամին 536, որպէս զի վերահաստատէ Անթիմոսը

(1) Գործք. Սրբոյն Լէոնի. 1 Յօդ. 851, 1005, 1009;  
(2) Անդ. Հատ. 1. Յօդ. 1509;  
(3) Անդ. Յօդ. 1155;  
(4) Թիէլ. Թուղթ. Համ. Քահան. Հատ. 1, Եր 206;  
(5) Մանսի. Հաւաք. Ժող. Բ. Հաւաք. 515-515;  
(6) Մանսի. Հաւ. Ժող. Բ. 921;  
(7) Անդ. 921:



իր աթոռոյն վրայ, այսպէս անոր պատասխանեց «Օգտո-  
տախառ թագուհի, ոչ երբէք կընամ հաստատել այն  
անձը, որն որ հերետիկոս դատապարտուած է» (1) :

Ութերորդ դարուն՝ ուրիշ Կ. Պօլսոյ Պատրիարդ մը  
Սբ. Տարասիոս, որ 787 տարւոյն Նիկիոյ Տիեզերական  
ժողովքին ներկայ էր, Քաղանճեան եպիսկոպոսին սխալ  
վարդապետութեանը հակառակ, կը ճանչնար Սբ. Աթո-  
ռին Արեւելեան Պատրիարդաց վրայ ունեցած վարչական  
իշխանութիւնը: Այս օրինակ կը գրէր առ Սբ. Աղբրանոս  
Պապը: «Ամեն եպիսկոպոսական կարողութիւն Ձեր քա-  
հանայական մեծազօրութեան ներքեւ ինկած է. ուղղա-  
փառ չէ այն անձը, որ չյարգէր այն Աթոռը՝ որուն վրայ  
նստած է Պետն առաքելոց. որ կուսուցանէ զմեզ, և կը  
կառավարէ զմեզ և զհաւատացեալս . . . : Հռովմայ  
Քահանայապետին թղթերովը՝ եկեղեցւոյ ցրուեալ ան-  
դամները կը միանան. ասանկով ճշմարիտ դաւանութիւնը  
կը հաստատուի, ասանկով ուղղափառ եկեղեցին կը կապ-  
ուի միութեամբ:» ( Միներ, Հայրախօս. Յուն. Հատ. 98. Էջ 1439: )

Նոյն դարուն մէջ՝ ուրիշ Կ. Պօլսոյ Պատրիարդ մ'ալ  
Սուրբն Նիկեփորոս, գրեց առ Լէոն Պապ. «Դուք իմ  
առաքելական Հայրս էք, լուսաւորեալ յԱստուծոյ . . .  
Մեք հաստատուն կեցեր ենք Ձեր վարդապետութեան  
ու օրէնսդրութեան վրայ »:

Չպիտի կարենանք լրմընցունել, թէոր ուղենանք  
ամեն դիպուածները և պատմական յիշատակները զրել, որոնցմով կը ցուցուի Սրբազան Քահանայապետաց իշխա-  
նութիւնը, որ կը բանեցունէին Արեւելեան Պատրիարդա-  
կան Աթոռոց վրայ: Առջեւը ունենալով այս դիպուածնե-  
րը ու վկայութիւնները, երեւելի պատմագիրը Միքայէլ  
Ռուսսէլ, որ ինչպէս գիտենք մէկ նախանձաւոր բարեկամ  
մը չէ Պապերուն, բայց կը բռնադատուի ըսել զճշմար-  
տութիւնը այսպէս. «Ամենայայտնի և անտարակոյս կը  
ստեսնեմ հին յիշատակարաններէն, որ Հռովմայ

(1) Վինետի, Գիրք Քահանայապետ. Ա. 203:

«Քահանայապետները առաւելութիւն ունին հաստատելու  
Արեւելեան Պատրիարդները: Բաւական կապացուցանեն  
այս յիշատակարանները, որ անոնց գլխաւորութիւնը կը  
տարածուի բոլոր եկեղեցեաց վրայ: Իսկ թէ որ Պապերը  
այս առաւելութիւնը յաճախ և բացարձակապէս չեն գոր-  
ծածեր, զայն Պապերուն շփոթութեամբ տալու ենք, որ ի-  
րենց պարտք մը չեն համարիր արտաքոյ հարկաւորութեան  
գործածել իրենց զերագոյն իշխանութիւնը»: (1)

Բայց որպէս զի մեր պատճառաբանութիւնը աւելի  
կատարեալ ըլլայ, բաց ի ան վկայութիւններէն որ մին-  
չեւ հիմայ յիշեցինք, որոնց մէջ լիուլի ցուցուցած է Սրբ.  
Պապին բարեկարգական իշխանութիւնը՝ ոչ միայն Արե-  
ւելեան Պատրիարդներուն, այլ և եպիսկոպոսաց վրայ,  
բերենք նաև ուրիշ վկայութիւններ ալ Սրբ. Պապերուն  
Արեւելեան եպիսկոպոսաց վրայ ունեցած իշխանութեա-  
նը նկատմամբ:

Յուլիոս Ա. Պապը Գ. դարու մէջ, նամակ մը ուղ-  
ղած է Արեւելցոց, որոնք քանի մը եպիսկոպոսներու  
վրայ կասկած ունենալով, աթոռնէն ձգել էին. ասոնց  
աս հետեւեալ դիտողութիւնները կընէ, «Ինչու կը-  
սէ, Աղեքսանդրիոյ եկեղեցւոյն համար փութով մե-  
զի չգրեցիք, գիտէք դուք՝ որ ըստ սովորութեան ա-  
մենէն առաջ պէտք էր մեզի գրել, որպէսզի մենք ալ  
իսկոյն վճռէինք ըստ արդարութեան: Թէ որ քանի մը  
եպիսկոպոսներ ձեզի կասկածաւոր էին, պէտք էր խըն-  
դիրը մեր եկեղեցւոյն յանձնել»: (Յուլ. Ա. Թուղթ  
առ Արեւելեայս,

Եւսթատիոս, Սեբաստիոյ եպիսկոպոսը, (Փոքր Ա-  
սիոյ մէջ) երբոր աթոռէն ձգուեցաւ Մելիտենի ժողով-  
քէն, զիմեց առ Լիբերիոս Պապը (չորրորդ դարուն) ո-  
րուն թղթերուն զօրութեամբը դարձեալ նստաւ իր ա-  
թոռը: Աս բանիս կը վկայէ Սբն. Բարսեղ մեծն՝ Կեսա-  
բիոյ նախագահը և Արեւելքի առաջին Հայրապետներէն  
մէկը, որն որ այսպէս կը գրէ իր 73 երրորդ նամակին

(1) Պատմ. Քահանայապետական. Իրաւ. Գլ. Բ. Թ. 12:

մէջը , « Եւսթատիոս ներկայացուց Լիբերիոս Պապին նա-  
» մակները , որ դառնայ նստի իր աթոռը : Ներկայացու-  
» նելուն պէս Թիանու ժողովքին (Փոքր Ասիոյ մէջ) այն  
» նամակները , մեկէն զինքը դարձեալ նստեցուցին » :

Նոյնպէս Կիւրիոյ եպիսկոպոսը Թէոտորեոսս կողմ  
նակից կասկածուելով Նեստորի հերեպիկոսութեան ա-  
թոռնկէց եղաւ . ինքը բողոքեց առ Սբ . Լէոն Պապը  
(չորրորդ դարուն) , ու իրեն հաղորդակից եղաւ : Քաղ-  
կեդոնի տիեզերական ժողովոյն Հայրապետները դուչեցին  
ըսելով (Պործ . Բ .) « թող Յարգելի Թէոտորեոսս ե-  
» պիսկոպոսը՝ բարեհաճի մանել և մասնակցել ժողովքին .  
» վասնզի ամենասուրբ եպիսկոպոսն (Հռոմայու) Լէոն ,  
» դարձուց զինքը իր եպիսկոպոսական աթոռը » :

Մարտինոս Ա . Պապը , յետ դատապարտելոյ զմիա-  
կամեաները 649 ին Լատերանեան ժողովքին մէջը , իրեն  
փոխանորդ կարգեց յԱրեւելս զՅովհաննէս Փիլատելիոյ  
եպիսկոպոսը ու ուրիշ փոխանորդական իշխանութեանց  
հետ , կարողութիւն տրւաւ իրեն որ սարկաւազ քահանայ  
և եպիսկոպոս յեւրոպէ : « Այսպէս օգնութեամբն Աստուծոյ ,  
» ուղղէք , կըսէ , որն որ պակասաւոր է , ու ան ամեն  
» քաղբըներուն որոնք Երուսաղէմի և Անտիոքոյ աթոռ-  
» ներուն ներքեւ ինկած են , եպիսկոպոսներ հաստատէք .  
» քահանայներ ու սարկաւաղներ , և աս ամեն բանը կա-  
» տարէք մեր հրամանաւը , և իշխանութեամբ որ հաւա-  
» տացած է մեզ ի Տեառնէ յանձն Սբյն . Պետրոսի Ա .  
» աքբելոց գլխաւորին » :

Նոյն Սրբ . Պապը կը հրամայէ ամենուն որոնք կը  
վերաբերէին Անտիոքոյ և Երուսաղէմի աթոռներուն , ինչ-  
պէս նաև Թէոտոր Եսպեայ եպիսկոպոսին , Անտոնի Բոկա-  
դիոյ եպիսկոպոսին , և Գէորգիոյ Աբբասօր Սբ . Թէոդո-  
սի վանքին (ամենն ալ Արեւելքցի) որպէս զի օգնեն ու  
հնազանդին իր նուիրակին . Փիլատելիոյ եպիսկոպոսին ,  
որուն որ հաւատացեր էր այն բարձր Առաքելութիւնը (1) :

Հիմայ կրնանք համարձակիլ հոս գիտողութիւն մը ը-

(1) Մանսի . Հուաք . Ժող . Ժ . 803 :

նելու . թէ որ Սրբ . Պապերը կրնային այսպիսի ընդարձակ  
իրաւաբանութիւն մը բանեցունել՝ առջի ժամանակները  
Արեւելեան Պատրիարդաց և եպիսկոպոսաց վրայ , երբ ե-  
կեղեցին ծաղկեալ էր յարեւելս , և այս իրենց իրաւա-  
բանութեան գործածութիւնը կը տարածուէր թէ հաւա-  
տոյ խնդրոյ վրայ , և թէ վարչութեան և եկեղեցական  
բարեկարգութեան , և մասնաւորապէս նուիրապետական  
ընտրութեան , ի՞նչպէս կը համարձակուի ըսել , թէ Ս .  
Պահին այս իրաւաբանութեան գործածութիւնը հակա-  
ռակ է կանոնաց , և թէ զնոյնը չկրնար բանեցունել հի-  
մակուան Արեւելեան Պատրիարդաց վրայ . որոնք ուրիշ  
բան չեն , եթէ ոչ մանրացուցական պատրիարքութիւնք ,  
հին մեծամեծ Պատրիարդութեանց աւերակացը վրայ  
կանգնուած :

Այսպիսի երեւելի դէպքեր առջեւնիս ըլլալով , ի՞նչ-  
պէս կըրնայ հաստատուիլ , թէ նուիրապետութեան ընտ-  
րութիւնը յԱրեւելս , ամեն ատեն անկախ էր Սրբ . Պա-  
պերուն իշխանութենէն : Աս հռչակաւոր Արեւելեան Հայ-  
րերը և Պատրիարքները այն նշանաւոր ժամանակները կ'ըն-  
դունէին՝ն արդեօք Սրբ . Պապերէն տրուած վճիռները , սահ-  
մանադրութեանց , հաստատութեանց և աթոռնկէցու-  
թեանց հրամանադիրները , եթէ կատարեալ համոզուած  
չըլլային , անոնց օրէնսդրական իշխանութեան օրինաւոր  
ըլլալուն ինչպէս յարեւմուտս , նոյնպէս յԱրեւելս . ինչո՞ւ  
դէմ չդրին անոնց՝ վարչական երկուութիւնը , կամ աղա-  
յական զանազանութիւնը Պաղանձեան եպիսկոպոսին յա-  
ռաջ բերել և ըսելով , « դուք Պատրիարդ էք Արեւմը-  
տից , զՁեզ իրրեւ Պապ եւրօպէս » , բայց իրաւունք չունիք  
Ձեր բարեկարգական իշխանութիւնը բանեցունել Մեր  
Պատրիարդութեանց վրայ » :

Այսպէս Արեւելքի մեծ հերձուածէն վերջը , երբ  
այս եկեղեցւոյն մէկ մասը ուղեց միանալ դարձեալ Սբ .  
Աթոռոյն հետ , Սրբ . Քահանայապետք կամեցան անոնց հետ  
շատ մարդասիրութեամբ վարվիլ , ու իրենց խելք արտօ-  
նութիւններ տուին , և այս մասնաւորապէս Լատերան .

եան ժողովքին մէջ՝ յամին 1243, ինչու որ Արեւելքի մեծ հերձուածքէն ետքը, այս մասնաւոր եկեղեցիները սկսան գոյութիւն առնուլ. ահաասիկ ինչ կերպ կը խօսի Խննովկենաիոս Պ. իր և յիշեալ Լատերանու ժողովքին առնուովը: (1) «Կուզենք հասել և յարգել Յոյները, որոնք մեր « օրերը դարձան ՚ի հնազանդութիւն Ս. դահին, պահե-  
 » լով անոնց, ցորեփ Թէ կարեփ Կերփ, իրենց սովորութիւնները ու  
 » իրենց «բարոյութիւնները»: Ժողովոյն խօսքերը շատ պարզ են.  
 ու և ոչ պզտիկ իմաստ մը կայ Պազանճեան եպիսկոպոս-  
 սին հնարած երկուութեան: Սրբ. Պապերը արածնու-  
 թիւններ տալով Արեւելեան նորահաստատ փոքր Պատրի-  
 արդաց, ոչ երբէք հրաժարեցան իրենց զլխաւորութեան  
 իրաւունքներէն, ու ոչ ալ կրնային հրաժարել: Ինչ կերպ  
 որ կը բանեցունէին ընդարձակօրէն իրենց վարչական և  
 բարեկարգական իրաւաբանութիւնը մեծադոյն Պատրի-  
 արդաց վրայ, նոյն կերպով ալ կը բանեցունէին նաև նո-  
 բահաստատ Պատրիարդաց վրայ՝ երբ որ հարկաւոր կը դա-  
 տէին: Եւ որովհետեւ սովորութիւն չունինք առանց ա-  
 պացուցի բան մը հաստատելու, բերենք քանի մը վկայու-  
 թիւններ ալ նաև փոքր Պատրիարդաց նկատմամբ, վասն զի  
 բաւական ապացուցոցինք մեր խնդիրը նկատմամբ մե-  
 ծադոյն Պատրիարդաց:

Բենետիկոս ԺՊ. Պապը (ութեւտաներորդ դա-  
 րուն), որուն իշխանութիւնը շատ անդամ այս նոր հերձ-  
 եալ եկեղեցականները կը յիշեն, իր Կոնդակին մէջ՝ զոր  
 կուտայ Եւոտիոս Մարօնիաներուն Պատրիարդին, այսպէս  
 կըսէ, « կուզենք որ քու ազգայնոցդ Անտիօքայ Պատ-  
 » ռիարդական եկեղեցւոյն վարչութեան մատակարա-  
 » րութեանը որով և իցէ եղանակաւ միջամուխ ըլլալէդ  
 » առաջ, այդ կողմերը գտնուող ուղղափառ եպիսկոպոս-  
 » սի մը ձեռքը յանձնես, որ ըլլայ ՚ի շնորհս և ՚ի հա-  
 » ջորդութեան Սր. Աթուոյս, կաթողիկէ հաւատոյ դա-  
 » ւանութիւնը որ սահմանած է Առաքելական աթուոնէն

Գործ. Լատեր. Ժողով. Լատպէ Հաւաք. Ժող:

« ամեն Արեւելեայց համար և հաւատարմութեան եր-  
 » դումը ինչպէս սովորութիւն է. և ստորագրես քու յատուկ  
 » ձեռնագրովդ և կնքես յատուկ կնքովդ, որպէս զի  
 » վաւերական ըլլան այդ դաւանութեան և երդմանն ձե-  
 » ւերը, և որչափ կարելի է շուտով իրկես նուիրակի մը  
 » ձեռօք առ Սր. Ժողովքն տարածման հաւատոյ » (1):

Նոյն Սրբ. Պապը Բենետիկոս ԺՊ. երբ Մարօնիդնե-  
 րուն Պատրիարդը Տորիայ՝ ինչորեց իր ընտրութեան հաս-  
 տատութիւնը և Պապին պատիւը, 1757 Մարտի 27 ի Քա-  
 հանայապետական ժողովքին մէջ հաճեցաւ տալ այսու դա-  
 ջամբ, որ « յիշեալ Պատրիարդին օրինաւոր Փոխանորդը Պա-  
 » լիումին տրուելէն առաջ, պէտք է յանուն զինքը խրկողին  
 » դաւանութիւն հաւատոյ տալ Աւրբանոս Ը. Պապին  
 » շինած ձեւոյն համեմատ, և նոյն ինքը Պատրիարդն  
 » ալ պէտք է անձամբ տալ զնոյնը » (2):

Կղեմէս ԺՊ. Պապն ալ նոյն պայմանը դրաւ 1767.  
 Սպրիլի 6 Տորիայի յաջորդին Յովսէփ-Ստեփանի ընա-  
 րութեան հաստատութիւնը տալու առեն (3):

Նոյն պայմանը դրաւ Պիոս Զ. Պապը 1716 Յունիս  
 21 ին Փիլիպպոս Պետրոս Սեմայել Մարօնիդ Պատրի-  
 արդին հաստատութեան առեն (4):

Նոյն ինքն եպիսկոպոսները Մարօնիդ Պատրիարդու-  
 թեան Դոմինիկոս Յովսէփ Թիանի ընտրութեան ժամա-  
 նակը 1797 Սպրիլ 29. հրատարակեցին՝ որ այս ընտրու-  
 թիւնը ոչինչ համարուի թէ որ ընտրեալը չտայ դաւա-  
 նութիւն հաւատոյ Հռովմոյ Սր. աթուոյն (5), Աւրիշ  
 կողմանէ գիտենք որ այդ դաւանութեան ձեւին մէջ  
 կայ և երդումը «նկեղձաբար հնապետութեամբ» Հռովմոյ Քահանայա-  
 պետին:

Բաց ասոնցմէ Մարօնիդ Պատրիարդներուն, ուղղա-

(1) Կոնդակ Տարած. Հաւ. Գ. 81:  
 (2) Կոնդ. Տարած. յաւել. Բ. երես 210.  
 (3) Նոյն Գ. երես 111.  
 (4) Նոյն Գ. երես 235.  
 (5) Նոյն Դ. երես 248.

կի Սբ. Աթոռէն ընտրութեան և հաստատութեան օրինակներն ալ պակաս չեն: Երբոր Յովսէփ Պետրոս Մարօնիգ Պատրիարքը մեռաւ, եպիսկոպոսները երկուքի բաժնուեցան, մէկ կողմը ընտրեց Ակրեայ եպիսկոպոսը Եղիան, միւսները ընտրեցին Տորիան, երկու կողմէն ալ խնդրեցին Սբ. Աթոռէն հաստատութիւնը: Բենեափկատոս ԺԳ. Պապը երկու ընտրութիւնն տլ փճացուց, ու ինքնիշխանաբար անուանեց Պատրիարք՝ Պամասկոսի եպիսկոպոսը զՍիմէոն Եւստիոս (1): Եւ որովհետեւ այս Մարօնիգ եպիսկոպոսներէն ոմանք չէին ուղէր կոր ըզ Պատրիարքը ճանչնալ, Պատրիարքական փոխանորդ մը դրին: Սբբլ Պապը մերժեց այս փոխանորդը, և ապրատամբ եպիսկոպոսները ՚ի հնազանդութիւն կոչեց (2):

Յամին 1779 Պիոս Զ. Պապը, կախակայեց Յովսէփ Պետրոս Մարօնիգ Պատրիարքին իրաւաբանութիւնը և անոր տեղը փոխանորդ մը դրաւ. ահա վճռոյն ձեւը. « Պատրիարքը անմիջապէս Հռոմ գայ. . . ու այս հրամանադրիս ազդարարութեան օրէն, կախակայեալ ըլլայ, « ինչպէս իրօքալ կախակայեալ է ամեն Պատրիարքական « և եպիսկոպոսական իրաւաբանութեանէ »: (3)

Ուրիշ կողմանէ կլեմէս ԺԱ. Պապը նստեցուց իր անթոռ Մարօնիգներուն Պատրիարքը զՅակոբ, զոր իր եպիսկոպոսները յանդգներ էին ձգել արթոռէն: (4)

Իսկ Սրբեւեբան եպիսկոպոսաց ընտրութեան համար՝ կանանանք որ Պիոս Զ. Պապը՝ երբոր խրկեց զՊետրոս Մորէզգա եպիսկոպոսը՝ իբրեւ առաքելական այցելու Մարօնիգներու եկեղեցւոյն, կը պատուիրէ իրեն իր առաքելական թղթովը, որ ՚ի Հսկա. 20 1763 ամի, տեղեկանալ եպիսկոպոսացուններուն արժանաւորութեանը: (5)

Նոյն Սբբ. Պապը Պիոս Զ, Քահանայապետական Ժու.

(1) Կոնգակ Յուելլ Տարած. Հաւ. Գ. եր. 75. 78. 87. 91.  
 (2) Նոյն Բ. եր 121.  
 (3) Նոյն Բ. 253.  
 (4) Կոնգ. Բենեգ. ԺԳ. Հատ. 1 Յուելլ Թ. 7.  
 (5) Կոնգակ Տարած Հաւատ. Գ. եր. 191.

դովբին մէջ, որ 1796, Յունիս. 27, կը հաստատէ Միքայէլ Թատել Պէրուժի եպիսկոպոսին ընտրութիւնը. այսպէս կը խօսի Սբ. Պապը. « Ի շնորհս աղաչանաց նուիրակին որ իրենց Պատրիարքին կողմանէ ներկայացաւ, կը հաճինք և կը հաստատենք զՊետր. Միքայէլ Թատել Սրբեպիսկոպոս Պէրուժի, բուժելով զպակասութիւնները, նաեւ գոյացականները: » (1)

Գրիգոր ԺԶ. Պապը ձգեց իր պաշտօնէն Պօղոս Արուժին Յերապօլոսոյ Մարօնիգ եպիսկոպոսը, ու հրամայեց անոր տեղը տեղապահ մը դնել (2):

Ալ բաւական է: Պէտք չէ որ կարգացողներնու մտադրութիւնը տարապարտ յոգնեցնենք առջեւին թափելով բոլոր յիշատակարանները, նկատմամբ Մէլքիցներուն, Ասորոց ու Քաղզէացոց Պատրիարքներուն.

Արդէն շատ ազբիւրներ ցուցուցինք, որոնց մէջ կը գտնուին այս յիշատակարանները, ով որ կուզէ կարող է այն յիշատակարաններուն դիմել: Աստահ ենք որ ապացուցինք՝ երկու կէտի դիտողութեամբ, այսինքն թէ Իրաւաց և թէ Գործոց, որ Քաղանճեան եպիսկոպոսին հնարած վարչութեան երկուութիւնը, ուրանալ է կաթողիկէ միութիւնը. ու ան որ ինքը Արեւելեան Կաթողիկոսութիւն կանուանէ, թէ որ աղէկ քննուի, գրեւ Արեւելեան Հերձաժ է, նորոգելով զնոյնը ստապատիր կերպով Հայոց եկեղեցւոյն մէջ, և ուրիշ բան չէ՝ եթէ ոչ Յանսենեան և Փեքրոնեան մտրութիւն փոխադրած յԱրեւել: Եական զանազանութիւնը ձեւոց զոր կը քարոզէ Սրբեւեբան եկեղեցւոյ համար, վերջապէս ան ալ ուրանալ է վարչութեան միութիւնը, որ սահմանական հիմն է Կաթողիկէ եկեղեցւոյ միութեան, զորն որ Քաղանճեան եպիսկոպոսը կուզէ Լատինականութիւն, Հոթոլականութիւն և Անգլիկանութիւն անուանել: Իր վերջնական պատասխանը զոր կուտայ Արեւմտեայց, աւանդ, սրտի ցաւօք կըսենք որ, իր վերջին հրաժարական ողջոյնն է զոր կուտայ Կաթողիկէ եկեղեցւոյ:

(1) Նոյն եր. 253.  
 (2) Նոյն եր. 75.

Պաղանճեան եպիսկոպոսը՝ հերձուածող շըլլալու համար, բաւական կը համարի յարէլ Հռովմայ Քահանայապետը իբրեւ եկեղեցւոյ երեւելի գլուխ, կամ թէ ինչպէս ինքը ուրիշ տեղմը կըսէ, « յանձն նորա դիտել միայն զՊապը՝ եկեղեցւոյ գլխաւորութեամբը »: Կեւելցունէ նաև թէ « եղանակ կելոյն, էկապէս արքեպ յԱրեւմտեան եկեղեցւոյ՝ հիմնած է Աստուծայն օրինաց վրայ, Քրիստոնէութիւնը կաղմուղ սկզբանց վրայ »: Արչափ բառկայ, նոյնչափ ալ սխալներ հակառակ պատմութեանց, նոյնչափ հերետիկոսութիւնք, ինչպէս որ ապացցուցինք մեր յիշատակարաններուն զօրութեամբը:

Պաղանճեան եպիսկոպոսը՝ բոլորովին հակասութեան մէջ է: Վասն զի մէկ կողմէ կը հաստատէ որ Արեւելցիք ճշմարիտ կաթողիկեայ ըլլալու համար, պէտք է որ միանան հաւատով և բարոյականով ընդհանուր եկեղեցւոյ հետ. ուրիշ կողմանէ կը զլանայ Սրբ. Պապերուն իրաւունքը միջամտութեան բարեկարգական, նուիրապետական և վարչական խնդրոյ մէջ նկատմամբ Արեւելեան Պատրիարգաց: Հիմայ զինքը իր խօսքերովը դատենք. Ընդհանուր կաթողիկէ եկեղեցւոյ հաւասարը միշտ ճանչցրեցաւ, և Վատիկանու ընդհանուր ժողովըը: (և ոչ Հռովմայու արքունիքը ինչպէս կըսէ Պաղանճեանը), հրատարակեց ամենորոշ կերպով Սր. աթոռին բարեկարգական իրաւունքը, ինչպէս յԱրեւմուտս նայպէս և յԱրեւելքս իբրեւ գլուխ, հայր և վարդապետ ընդհանուր եկեղեցւոյ: Հետեւաբար Պաղանճեան եպիսկոպոսը մէկդի նետելով հաւատոյ մէկ մասը, զոր կընդունի և կը դաւանի կաթողիկէ եկեղեցին, նոյն էի Կրօնը կը խօստովանի որ Հերետիկոս է: Երկու նախադասութեանց մէջ որ կը պաշտպանէ, միջինը չկայ: Այսպէս Պաղանճեան եպիսկոպոսը ինքը իրեն կը հակառակի. մերժուած է իր միաբանութեան նախընթաց յիշատակներէն, ընդդիմախօսած ամէն Արեւելեան եկեղեցւոյ հայրապետներէն, և մասնաւորապէս դատապարտեալ է Վատերանու, Փրոքենտիոյ և Վատիկանու ժողովքներէն, և հետեւաբար

ամենայն իրաւամբ գերազոյն Քլուին կաթողիկէութեան իր ատենախօսութեան մէջ 1872 Պեկոբեմբեր 23 հրատարակեց զինքը, ու բողոք իր հետեւողները արտաքոյ կաթողիկէ եկեղեցւոյ: Մեք որ ճշմարիտ կաթողիկեայ Հայ ենք Արեւելեան ծէտով, որ անվրթար կը պահենք մեր Սր. Հարց արարողութիւնները, ոչ Լոռնայեալ ենք, և ոչ Արեւոտայ, բայց և ոչ ալ զմեզ Արեւելեան Կրօնը: Հայ կանուանենք, վասն զի ամենեւին չենք դիտել թէ որո՞նք են Հարաւային կամ Հիւսիսային կամ Արեւմտեան կաթողիկեանները: Մենք կըսուինք կաթողիկեայք Հայածէսք, կամ Արեւելածէս կաթողիկեայ Հայք, մենք Թուրքիայի կաթողիկեայ Հայերն ենք: Հաւատարմաբար եկեղեցւոյ Հարց ետեւէն կերթանք. որ ուրիշ անգամ ծաղկեցուցին այս Արեւելեան երկիրը, և կը կրկնենք ինչ որ վեցերորդ դարուն Յուստինոս Օգոստոս կայսեր ժամանակը, Ակակիոսի վտանգաւոր քարոզութեանց պատճառաւ, որ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքն էր, գրեթէ վեց հարիւր յարգելի Արեւելեան եպիսկոպոսներ արքեպիսկոպոսներ և պատրիարքներ, զիրենք պարտական սեպեցին դրով յայտնել առ Սր. Արմիզդ. Պապը: Այս երեւելի Պապը, փափաքելով այնպիսի շփոթ ժամանակի մէջ դիտնալ որ ո՛վ են այն եպիսկոպոսները որոնք իր հետը հաղորդութիւն ունին, և ո՛վ են անոնք, որոնք յեկեղեցւոյ բաժանեալ են, թուղթ մը խրկեց անոնց ու ստիպեց որ ստորագրեն ՚ի նշան ուղղափառութեան և հաղորդակցութեան: Այս վեցհարիւր Արեւելեան հայրապետները մեծաւ պատկառանօք և զարմանալի հպատակութեամբ հնազանդեցան Սրբ. Պապին հրամանին սյոպէս ըսելով: « Մենք Առաքելական Սր. Աթոռին ետեւէն կերթանք ամեն բանի մէջ, և կը ճանչնանք իր սահմանադրութիւնները, և կը յուսանք որ արժանաւոր կըլլանք հաղորդակցելու Ձեզ, ու Ձեզ Առաքելական աթոռին. ուր կը գտնուի ճշմարիտ և ինչ հաստատութիւն քրիստոնէական կրօնին, և կը խօստանանք չյիշել ՚ի Սր. Պատարագի անոնց անունները

« որոնք բաժանեալ են ՚ի հաղորդակցութենէ կաթողիկէ  
 « եկեղեցւոյ, այսինքն անոնք՝ որոնք չեն համայն յառնայնէ  
 « Առաքելական Սբ. աթոռիդ հետ: Մենք մեր ձեռք  
 « ստորագրեցինք այս հաւատոյ դաւանութիւնը, և զնոյ-  
 « նը կը ներկայացունենք Ձեզ, ով Սուրբ և յարգելիդ  
 « Արմիզդ, Քահանայապետդ քաղաքին Հռովմայ (1) »:

Այսպէս վեցերորդ դարէն ի վեր, գրեթէ վեց հա-  
 բուր երեւելի արեւելեան եպիսկոպոսներ և պատրիարդ-  
 ներ՝ բաւական չէին սեպեր իրենց՝ միայն յարգել զՍրբազան  
 Պապը, հապա կը փութային հանդիսապէս յայտնել, որ  
 իրենք ամեն կերպով համաձայն են Սբ. Աթոռին. ու կը  
 ճանչնան իւր ամեն սահմանագրութիւնները. և հերձուա-  
 ծող կը համարին ան ամենքը, որոնք չեն համաձայնի-  
 բոս ամենայնի Սբ. Աթոռին: Եւ մենք՝ որ ճշմարիտ և անկեղծ  
 հետեւող ենք այս արեւելեան հարց, մենք՝ որ կը ճանչ-  
 նանք մեր սրբազան պարտքը առ մեր Օգոստափառ թա-  
 գաւոր Սուլթանը, կը ճանչնանք նաեւ մեր առ կրօննիս  
 սնեցած պարտքերնիս, կը պարտաւորինք իբրեւ հերձ-  
 ուածող ճանչնալ զՔաղանձեան եպիսկոպոսը և իր հետե-  
 ւողները նոյն պատճառաւ, որով որ Սրբազան Պապը  
 Պիոս Խններորդ, Սբ. Արմիզդի յաջորդը՝ և գերագոյն զը-  
 բուխը ուղղափառութեան, հրատարակեց զիրենք հերձ-  
 ուածողք:

Մեր նշանաբանն այս է. տալ զԱյսերն Այսեր, և  
 զԱստուծոյն Աստուծոյ, ինչպէս որ մենք իբր մատրնու-  
 կը համարինք ով որ կը յափշտակէ մեր սիրելի Արքա-  
 յին օրինաւոր իրաւունքները, նոյնպէս կը համարինք  
 զՔաղանձեան եպիսկոպոսը և իր հետեւողները արտաքոյ  
 ուղղափառ եկեղեցւոյ փան զի կաթողիկէ ուղղափառ  
 եկեղեցւոյ գերագոյն զբուխը, զիրենք այնպէս հրատա-  
 րակած է իր հանդիսական վճիռներովը:

Վերջնական ազգարարութիւն մ'ալ կ'ուղղենք առ Քա-  
 ղանձեան եպիսկոպոսը: Սնտարակոյս իրեն ծանօթ է այն  
 խռովութեան պատմութիւնը, որ ծագեցաւ արեւելեան

(1) Ժողով. Տիեզ. Բ. Գործք. 1.

եկեղեցւոյ մէջ ՚ի հինգերորդ դարուն. իրեք երեւելի  
 եկեղեցականք Արեւելեան եկեղեցւոյն, Վիտալ, Մելիտի-  
 ոս, և Պաղինոս, կը վիճէին ուղղափառութեան վրայ-  
 շփոթութիւնը վերջի ծայր հասած էր. երեքն ալ կը պըն-  
 դէին թէ Հաղորդեց են Սբ. Պապոս Պապն: Ան ատեն  
 Սուրբն Հերոնիմոս, հռչակաւոր վարդապետը Արեւելից  
 և Արեւմտից, չկարենալով իր դիտութեամբը սրոյշել թէ  
 առ երեքին ո՛րն է կաթողիկէայ եկեղեցւոյն մէջ, կամ  
 երեքին ո՛րը պէտք է ուղղափառ ճանչնալ և ո՛րը հերձ-  
 ուածող, ու բնաւ չփտահանալով անոնց հաստատութեա-  
 նը, ուղղեց այս յիշատակաց արժանի խօսքը առ Սուրբն  
 Պամասոս. (1) « Ես որ հետեւող եմ Յիսուսի Քրիստոսի,  
 « հաղորդութիւն ունիմ Քեզ երանելոյդ հետ. այսինքն  
 « Սուրբ Պետրոսի Աթոռոյն: Գիտեմ որ եկեղեցին այս  
 « վէմիս վրայ շինուած է. . . . Ես չեմ ճանչնար Վիտա-  
 « լը, կը մերժեմ Մելիտիոսը, անձանթ է ինձի Պա-  
 « ղինոսը. ով որ Քեզի հետ չէ, կորսուած է. կընդու-  
 « նիմ այն անձը որ հաղորդակից է Սուրբ Աթոռիդ: Իրեքն  
 « ալ կը պահանջեն որ հաղորդակցութիւն ունին Սրբու-  
 « թեանդ հետ. թէ որ մէկը միայն ըսած ըլլար, կը հա-  
 «ւատայի. բայց որովհետեւ իրեքն ալ զնոյն բանը կրսնն.  
 « կը հետեւի որ կամ երկուքը և կամ երեքն ալ կը ստեն:  
 « Եր ինչդրեմ ուրեմն, ցուցուցէք մեզի որ դիտանք թէ  
 « ի՛նչ պիտի ընենք. . . . Դուք որ յաջորդ էք առաքելոց  
 « արժանապատուութեանը. . . . իմացուցէք ինձ վերջապէս  
 « Ձեր նամակովը, որ դիտնամ թէ որան հետ պե՞տք եմ հաղը-  
 « րանել Ստրեստանի մէջ:

Հաւատարմութեամբ հետեւելով մեծահռչակ հարց  
 շաղաց, որք պայծառացուցին մեր արեւելեան եկեղե-  
 ցին, կրսեմք Քաղանձեան եպիսկոպոսին և իր հետեւո-  
 ղացը. դուք կուզէք զձեզ կաթողիկէա ուղղափառ  
 անուանել, ինչպէս կ'յամառէին որ ըսուին՝ Վիտալ,  
 Մելիտիոս և Պաղինոս: Բարի է. ուրեմն ինչպէս Սուրբ  
 Հերոնիմոս զիմեց առ Սուրբն Պամասոս, մենքալ

(1) Հատ. Ա. Նամակ. 13. և 15:

գիմեցինք առ Սրբազանն Պիոս Իններորդ, որ դիմանաք թէ ի՛նչ էք. և ինքը հրատարակեց՝ որ իր հաղորդակցութենէն դուրս էք, և յափշտակիչ կաթողիկէ անուան, և զձեզ հերձուածող կոչեց: Ս. յայէս վեց հարիւր Սրեւելեան հայրապետներով, և Սուրբ Հերոնիմոսի հետ. և Ուղղափառ արամաբանութեամբ, յայանապէս կրօննք որ մեզ անկարելի է ճանչնալ զձեզ իբրեւ կաթողիկէ ուղղափառ և անդամ ուղղափառ հայրապետութեան. վերջապէս անկարելի է որ ճանչնանք ձեր իրաւունքը խօսելու՝ յանուն կաթողիկէ Հայ Եկեղեցւոյն: Անունը միայն փոխելով իրեն կը կրկնեմք ինչ որ, մէկ վարդապետ մը և խօստովանող Սրեւելեան եկեղեցւոյն Սուրբն Մարտիրոս Աբրախայի Կրիստոսոստոյ, ըսաւ, վեցերորդ դարուն՝ միակամեայ հերետիկոսի մը, որ կը պնդէր թէ ինքն ալ կը վերաբերի ուղղափառ եկեղեցւոյ և հաղորդակից է Սբ. Աթոռոյն: Ասոր համար հետեւեալ կերպով կը խօսէր Սուրբն Մարտիրոս: « Թէ որ կը փափաքի ինքը հերետիկոս չըլլալ, և » ոչ ըսուիլ, պէտք չէ շանալ աս, ան, համոզելու: Աս ժամանակ անցունել է. խելքի դէմ է: Պատն զի ինչպէս որ մէկը » միայն (Սրբ. Պապը) իր վրայ գայթակղած ըլլալով, ամեն » քնն ալ գայթակղած են. այսպէս ալ մէկը միայն (Պապը) » վրան շինուելով՝ անտարակոյս ամենն ալ կը շինուին: » Թո՛ղ փութա՛ որ Հռոմայու առաքելական Սբ. աթոռոյն միտքը շինուի: Իսկ և իսկ Սբ. աթոռը գոհ եղաւ » ծին պէս, ամեն տեղ իբրեւ ուղղափառ և բարեպաշտ » կրնդ ունին զինքը: Կը խաբուի թէ որ կարծէ թէ կրնայ » համոզել, կամ նախապաշարել անոնց հաւատքը, և չը » ջանար փութալ աղաչել. և Սրբազան Պապին և Սբ. Պահին » Հռովմայ միտքը շինել իր վրայ, այսինքն Ս. առաքելական » Աթոռին, որ Յիսուսէ Քրիստոսէ ընկալաւ և ունի յամենայնի » և վասն ամենայնի հրամանատարութիւն, իշխանութիւն և » կարողութիւն կապելոյ և արձակելոյ, ՚ի վերայ ամեն Սբ. » եկեղեցիներուն Աստուծոյ երկրիս վրայ, համաձայն բա » յոր Սբ. Ժողովքներուն և սրբազան կանոններուն »: (1)

(1) Թուղթ առ Պետրոս Հաւ. Ժող. Հաս. Գ. Էջ. 1320

Սրբ. թո՛ղ Պազանճեան եպիսկոպոսը իրեն յարմարցունէ, վերոյիշեալ վկայութիւնը և շուտով կը դիմնայ ընելիքը: Վերջապէս կը կրկնենք այն խօսքը իրեն համար, զոր Կոստանդնուպոլսոյ մեծ պատրիարք մը 586 ին ընդհանուր Ժողովքի մը մէջ, որ հաւատքուած էր ՚ի նոյն մայրաքաղաքը, հրատարակեց հաւանութեամբ Հայրապետաց Ժողովոյն իր ժամանակի հերձուածողաց համար, որք կը պնդէին թէ իրենք ալ վերաբերեալ են առ կաթողիկէ եկեղեցին, ու բաժնուած չեն Հռովմէական Սբ. Աթոռէն: Ս. յայէս կըսէր Մեննաս Պատրիարքը Ժողովքին Հարց. « Ինչպէս Ձեր Սրբութիւնը դիտէ, մենք Ս. առաքելական Սբ. Աթոռին կը հետեւինք. և անոր կը հնազանդինք. և կը հաղորդակիցինք անոնց հետ, որոնք հաղորդակից են իրեն. ու ինչպէս որոնք, որոնք » ինքը դատապարտած է: » (1)

Ահաւասիկ մեր վերջի խօսքը. կամ լաւ եւս՝ Եկեղեցւոյ վերջի խօսքը ընդգէմ վերջական պարտաւանդոյ:

Ձենք ուղեր պատասխանել Պազանճեան եպիսկոպոսին ընդդիմութեանցը որ կը հանէ նկատմամբ Ռէվերսուրուսոյ (ի վերադառնալն) Կոնդակին: Ետքի Բարիզ ապուած տեարակը, որուն վերնագիրն է. Հոյո ինդիւր. Եւթուս դը Բարիզեանց յարոցեաց ընդդէմ Ռէվերսուրուսոյ Կոնդակին, որ հոս ապեց նաեւ Քուրիէ Թորիան լրագիրը, փետրվարի 15ին այնպէս կը հերքէ այդ ընդդիմութիւնները որ ալ շաղակրատանաց տեղ չմար: Կարգացողը կրնայ հոնկից տեղեկանալ միանգամայն և ուրիշ անմերժելի վկայութեանց, նկատմամբ բարեկարգական իրաւաբանութեան Սբ. Աթոռոյն՝ Հայոց Կիլիկիոյ պատրիարքութեան վրայ:

(1) Լապպ. Հաւաք. Ժող. Տպագր. Վենետիկ. Հատ. Է. էջ. 1270

## Ա. Չ. Գ. Ա. Ս Է Ր Ս

Կրօնասէր և ազգասէր մարդ մը, չկրնար երեւակայել թէ ինչպէս կըլլայ, որ քրիստոնեայ մը՝ յետ կարգաւոյ և լռելոյ՝ տյոչափ անթիւ և ամենաուսոյդ վկայութիւններ՝ եկեղեցական պատմութեանց և սրբոց Հարց, որոնց մէջ ճշմարտութիւնը՝ արեւու պէս կը փայլի, ինքը դարձեալ չտղենայ համազուիլ, գարձեալ ուրանայ ուղղափառ կրօնքին հիմը, ուրանայ եկեղեցւոյ ընդհանրութիւնը և միութիւնը, չընդունի Տիեզերական Սբ. Ժողովոց վճիռները. և վերջապէս ուրանայ եկեղեցւոյ Գլխաւորին այն իշխանութիւնը, զոր Տէրն մեր Յիսուս Քրիստոս իր ձեռքքը տըւաւ, ըսելով, «Քեզ տաց զփականս արքայութեան» երկնից, զոր կապեցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս»: Քեզի կուտամ երկնքին բանալիները. զո՛վ որ երկրիս վրայ կապես, անիկայ երկինքն ալ կապուի, և զո՛վ որ երկրիս վրայ արձրկես, երկինքն ալ արձակուի: Ո՛րն է պայմանը, ո՛ւր է սահմանը, զոր ոմանք կուզեն դընել լիուրի իշխանութեան Քահանայապետներուն՝ յաջորդաց Առաքելապետին Պետրոսի: «Չոր կապեցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս»: Կը թողու իւր փոխանորդին կամացը. կը յանձնէ անոր դատմանը, զորն որ դու կը դատես, կըսէ, թէ արժանի է արձակելոյ, եղիցի արձակեալ յերկինս: Չկայ հոս ոչ պայման, և ոչ դաշնագրութիւն, ոչ խորհրդակցելոյ, և ոչ հրաման ուղեւոյ. այլ



բացարձակաբար կըսէ, թէ որ դատեցիր թէ պէտք է կապել, կապէ՛, և եղիցի՛ կապեալ յերկինս : Ահա այսպէս հաւատացեր և ընդունեցէ ուղղափառ եկեղեցին Սրբազան Պապերուն ընդհանուր իշխանութիւնը :

Քրիստոս տէրն մեր իր Եկեղեցւոյն հիմնաքարը ոչ Վաղարշապատի դաշտերուն, ոչ Լիբանանու լեռներուն, և ոչ Վենետիկոյ ճախիճներուն վրայ դրաւ . այլ Հռովմայ եօթնաբլուր մայրաքաղաքին, որուն կայսրութիւնը Օգոստոսի ժամանակ՝ պատուեր էր իր ծննդեամբը . որուն յաղթական կամարները՝ առհաւատչեայ էին ապագայ դմբէթաշարի հոյակապ Եկեղեցիներուն . որուն դեպի՛նը ուղղուելով անթիւ նահատակաց արիւնով, բուսոյց Քրիստոնէութեան սրբածանաց՝ անհամար խաչերը, որոնք կը զոլանայսոր բովանդակ քաղաքին սրբանուէր յարկայ վրայ : Հին իշխանն Առաքելոց Պետրոս՝ նմանօրինակ մահուամբ իր վարդապետին աւանդեց հողին . հին հաստատեց իր Ս.Թուր, էբբեւ ժայռ անսասան յաշեաց մուրթութեան հերետիսկտաց . «Եւ գրունք գժօխոց զնա մի՛ յաղթահարեցայն» : Ինքն Քրիստոս քաջ հովիւր, իրեն փոխանօրդ դրաւ զՍքն . Պետրոս, ու յանձնեցով իր հօտը ըստ, «Սրածեա՛ զոչ» խորս իմ, արածեա՛ զգառինս իմ» :

Ապա ուրեմն ի՞նչպէս կըլլայ, որ այս վերջի ժամանակները ոմանք մեր համազդի եղբայրներէն, չուզենալով տեսնել այս ճշմարտութեան լոյսը . մուրթութեան խաւարին մէջ կը խարխարին, ու հերետիկոսական սկզբունքներով ի վտանգ կորստեան դրեր են իրենց հողին . չեն մտածեր, որ թէ՛ անդամ մը բաժնուի մարմինէն, այլ չըկըրնար դառնալ ու շտկել իր սխալանքը : Այն սեւ քօղը, որ իջեր է սակաւուց ոմանց աչքին վրայ, որով չեն կըրնար կոր դեռ նշմարել ճշմարտութեան լոյսը . այն թանձր քօղը, կըսեմ, խստասրտութիւնն է, ու դիւական յամառութիւն . որ հպարտութիւնը ձեռք առած, չուզեր խոնարհել, չուզեր զզջալ, թէ և կը ճանչնայ իր սխալիւր, իր յանցանքը : «Որդիք մարդկան, կըսէ Քաւիթ հառաչելով, «մինչեւ յերբ էք խստասիրտք, . . . և ինդրէք զսը-

» տութիւն» : Հարկաւ ճշմարտութիւնը չընդունողները յամառութեամբ, պէտք է որ դիմեն ստութեան, որ անկից օգնութիւն մը գտնեն իրենց մուշար խիզճը չըտկելու, ինչպէս ան՝ թէ Հռովմայէն եկած արդեւքները ու բանադրանքները Սրբ . Պապը չըզիտեր, շինծու բաներ են . մեկ երկու հոգւոյ զլխին տակէն է . և թէ Սրբ . Պապը ծերացեր ցնդեր է, ըրած թողածը չըխտեր . և այլ այսպէսի սուտ լուրերով կը կարծեն իրենք զիրենք խաբել ու խիզճերին հանդարտեցունել . բայց անօգնւտ . որդ մընէ, որ չկրնար երկար ժամանակ ծածկեալ մնալ . կուտէ անդադար, կը փըզըկտէ զսիրտը, ու վերջապէս կը ծակէ դուրս կեղէ, կիմանայ թէ չարաշար խաբուեր է : Այլ երանի՛ թէ այս աշխարհքիս մէջ իմանայ ու ճանչնայ . զուցէ զղջմամբ և յետս կոչմամբ, կընայ այն որդը մեռցունել ու հանդարտիլ, ապա թէ ոչ՝ եթէ հանդերձեալ կենայ մնայ, հոն որդը չարտի մեռնի, և միշտ պիտի կրծէ զսիրտը : «Ուր որդն նոցա ոչ մեռանի», կըսէ Տէրն մեր :

Բայց կաղաչեմ, թէ որ կուղէիք չհնազանդիլ Յաջորդին Պետրոսի՛ Սրբ . Պապին . ինչո՛ւ էջմիածնայ զողը չը դիմեցիք . ի՞նչ աւելի ձեզմէ կը պահանջէին Հաղբատայ և Սանահնի առաջնորդները, եթէ ոչ մերժել զժողովը Քաղկեդոնի, և ուրանալ զիշխանութիւն Սրբոյն Լէոնի Պապին և յաջորդաց նորա ի վերայ ընդհանուր Քրիստոնեայ Եկեղեցւոյ : Նոյն չէ՞ և ձեր հիմակուան նորաստեղծ մուրթութեան վարդապետութիւնը, որուն դէմ այսչափ ճշմարտասէր ուղղափառք՝ գրուածքներով սպառազինեալք յարձակեցան . այս այն մուշար վարդապետութիւնը չէ՛ր, զոր չընդունեն ընուն համար ձեր հայրերը ու բարեկամները, ծովեր ձորեր չափեցին, ու ոսկորնին եւս պատանդ ձգեցին իրենց ուղղափառութեան և միութեան ընդ Հռովմէական կաթողիկէ Սբ . եկեղեցւոյ . և դարձան եկան իրենց հայրենիքը՝ հարուստ ազատութեամբ . զոր մինչեւ երկու երեք տարի առաջ, դուք որդիքդ կը վայելէիք կոր . և այսօր ապերախտք անոնց արդեանց և վաստակոց, ուղեցիք այն հոգեւոր անդին ազատութիւնը՝

ժողովանակել մարմնաւոր աղետալի գերութեան : Աորհա-  
մարէք այն Աստուածահաստատ Ս.թուր , որ մեր ազա-  
տութեան համար՝ չինայեց ոչ մէկ բան մը . և հայրական  
խնամք՝ յորդոր եղաւ բոլոր Ուղղափառութեան , ամեն  
կերպով յօգնութիւն հասնիլ անտերունչ ժողովրդեան , և  
աղատել դառանց հօտը՝ գիշատիչ ճանկերէ :

Մերժեցի՛ք զՀռովմ , չդիմեցի՛ք յԷջմիածին . ո՞ր  
աթոռին պիտի ապաւինիք՝ որ զձեզ պաշտպանէ . չկայ  
Քրիստոնէսայ ժողովուրդ մը , որ զձեզ ճանչնայ . ամենքն  
ալ երես դարձուցած ծուռ աչքով կը նային : Հռովմէա-  
կան կաթողիկեայ չէք , Էջմիածնական չէք , Յունադա-  
ւան չէք , ինչ էք հապա , ինչ նշանական անուն դնելու  
է Ձեզ , . . . Եպիսկոպոսնիդ բանադրեալ և նդովեալ .  
քահանանիդ կախեալ և արդիւեալ . որք փոխանակ սե-  
ղանոյ կը պաշտեն Աորբանը : Ոտքերնուն տակ առած  
Յկեղեցւոյ ամենասուրբ կանոնները , կը ձեռնադրեն ,  
կը պատարագեն , ու կը պաշտեն եկեղեցւոյ խորհուրդ-  
ները սրբապղծութեամբ . ու խեղճ ժողովրդեան մեղ-  
քերը քաւելու տեղ , կը պատրաստեն որդի դժոխոց :  
Ա.ս ինչ խիղճ է , աս ինչ անգութ սիրտ է այս Յկեղե-  
ցականաց սիրտը , որ այսչափ հոգւոյ կորստեան պատ-  
ճառ ըլլալով , ամենեւին ցաւ մը չեն զգար , բնաւ իրենց  
անօրէնութենէն ետ չեն կենար , չեն զղջար :

Թշուա՛ւ ազգ , տարաբա՛ղք հայրենիք , աս ինչ ա-  
նողորմ ճակատագիր է , որ ազգիս վրայ կը կարգանք . . .  
Ինչ փառք էր որ կը վայելէինք քառասուն տարուրնէ  
ի վեր , ինչ համբաւ քաղաքականութեան , ինչ անուն  
բարի , ինչ կրօնասիրութիւն , ինչ ուղղափառութիւն .  
նախանձելի օրինակ միւս բաժանեալ ազգաց . յարգե-  
լի առաջի Օսմանեան մեծի Տէրութեան . սիրելիք իշխա-  
նաւորաց և պատկառելի զիտնոց . պարծանք հայրենեաց  
և ակոյանք ուղղափառ Քրիստոնէութեան , մինչեւ մե-  
ծին Քաղիոյ Ասյսրուհին՝ բերել խոնարհեցուցանել ա-  
ռաջի Պատրիարքական բեմին , և խնդրել հայրական  
օրհնութիւնը՝ ի զարմացումն և ի նախանձ օտարածի-

սից , Եւրոպայի լրագիրները , ևս առաւել Քաղղիոյ՝  
չէին կրնար կոր արժանի գովեստից բառ մը գանել սա-  
կաւաթիւ ազգերնուս . սաք կոխած տեղերնիս՝ ուրիշ  
բան չէինք լսեր՝ եթէ ոչ իրենց ունեցած համարման մե-  
ծութիւնը՝ Աոստանդնուպօլսոյ մէջ գանուած Աթոռիկէ  
Հայոց , Բայց աւա՛ղ . . .

Հազի՛ւ թէ այսպիսի փառաւորութեան հասած՝ կը  
կարծուէր որ օրէ օր առաջ երթայ , ծաղկի ազգերնիս ,  
ահա ձեռք առին ոմանք միւսանդամ այն նախկին շա-  
րանխանձ երկպառակութիւնը , որ երբեմն զրկեց բո-  
լորովին ազգերնիս ՚ի թագազարդ իշխանութենէ . նոյնը  
հիմայ ալ զրպարտելով օտարահաւատից՝ իրենց հայրը և  
բարերարը , որ տառապեալ և ընկճեալ Հայ անունը՝  
հաւասար կըթեալ ազգաց փառաց բարձրացուց : Եւ եղ-  
բայր եղբօր մէջ ատելութիւն սերմանող անուպայ առաջ-  
նորդաց և ոչխարազգեստ գայլերու հետեւելով , կորու-  
սին իրենց հոգեւոր գանձը , վրդովեցին այն երջանիկ  
խաղաղութիւնը զոր կը վայելէին , աղտեղեցին համբաւ-  
նին , նախատելիք եղան օտար ազգաց , և այսն կատա-  
կանաց առաջի իշխանաւորաց , և սրբանուէր Քրիստո-  
նէութեան անքննելի խորհուրդները , ծաղրածութեան  
նիւթ պատրաստեցին այլադէնից : Եւ որ աւելի զարմա-  
նալին է և ցաւալի , գործադրողք այս ամեն ազգիս  
թշուառութեան՝ այնպիսի անձինք եղան , որոնցմէ աւելի  
ուրիշ բան կըսպասուէր , քան թէ այնպիսի կրօնամու-  
վրէժխնդրութիւն : Ասոնցմէ ոմանք այնպիսի բարեպաշտ  
ծնողաց զաւկըներ են , որոնց հոգին երկինքը կը բողո-  
քեն այսօր Աստուծոյ արդարութեան՝ իրենց որդւոց ա-  
նիրաւ զնացից . ոմանք ալ տարիներով ազատամիտ ազ-  
գաց մէջ կըթուելով , կը տեսնէին ինչպէս հայրենասի-  
րութիւնը յաղթող է ամենայն անձնական շահախնդրու-  
թեանց : Արթեալ մայրաքաղաքներու մէջ շատ տեսակ  
կրօնքներ կան , բայց և ոչ մեկը մեկալէն կը պահանջէ  
իր կրօնին հաւատակից ըլլալ . կը դրեն , կը խօսին , կը  
փափաքին համոզել , այլ ոչ երբէք կըստիպեն կամ կը

հալածեն : Իսկ ընդ հակառակը մեր ազգը՝ կրօնքի հա-  
մար մեկզմեկ հալածելով, մեկզմեկ մասնելով . զրկուե-  
ցաւ ամեն բարեմասնութենէ . և ամեն թշուառութիւն  
զլուխը ժողովուելով, դեռ չզգաստանար, ու մինչեւ այս  
մեր օրերը՝ կը տեսնենք նոյն բարբարոսական հակառա-  
կութեան ոգին տիրած սրտերնուն վրայ, կը հալածեն  
կը յափշտակեն անողորմաբար, ոչ աղքատաց կողորմին,  
և ոչ Եկեղեցւոյ սրբութենէն կակնածեն . և ձեռքերն էն  
եկած շարութիւնը չեն թողուր . միայն թէ իրենց կրօ-  
նամուլութեան վրէժը առնուն . և այս՝ եղբայր եղբօրմէ,  
բարեկամ բարեկամէ : Միթէ կարծէք թէ Ուղղափառ  
Եկեղեցին կրնայ կործանիլ . կրնայ ոչնչանալ : Թշնամին  
ճշմարտութեան իր պաշտօնեաներուն հերետիկոսաց ձե-  
ռօք, միշտ կուտեր է Եկեղեցւոյ հետ, որ թէպէտ քիչ  
մը ժամանակ նեղութիւն և վիշտ կը կրէ, բայց վերջը  
միշտ յաղթող եղեր է . ու դարձեալ իր ծոցէն հեռա-  
ցած որդիքը, իր թեւին տակը ժողուելով, Եկեղեցին  
ոչ երբէք որդեկոտոր ըսուեր է : Առջի դարերուն՝ չկար  
այնպիսի հզօր հերետիկոսապետ մը, ինչպէս էր պիղծն  
Արիօս, որ Նիկիոյ Աբ . Ժողովքին մէջ՝ ոչ միայն երե-  
ւելի եկեղեցականներ և հայրապետներ կողմնակից ու-  
նէր, այլ և Կայսերք և Կայսրուհիք Բիւզանդիոյ՝ նոյն  
ազանդով, գրեթէ սուր ՚ի ձեռին պատերազմեցան ուղ-  
ղափառութեան հետ, սակայն անոնք ալ չկրցան դիմա-  
նալ, անոնք ալ փճացան դնացին և ուղղափառութիւնը  
անոնց զլուխը ջախջախեց : « Որ հարցի ընդ վէճն այս  
փշրեցի » :

Հարցունենք անգամ մը, թէ ինչ շահ ունեցաք,  
ինչ աղեկութիւն տեսաք այսպէս ազգը վրդովելով, այս-  
պէս Եկեղեցւոյ ապստամբելով : Չէ՞ք ուզեր ճանչնալ  
Առաքելապետին աթոռին իշխանութիւնը . առջեւի ճամ-  
բանիդ բաց է, ու՛ր կուզէք հոն դնացէք, [ (միայն թէ  
զՁեզ ընդունին) . բայց ինչ իրաւունքով կուզէք զրպար-  
տել, վնասել և հալածել զանոնք, որոնք : Հռովմէական  
Եկեղեցւոյ գօգը սնանելով, չեն ուրանար մայրերնին .

միթէ այս կրօնամուլութիւն չէ՞, և կուզէք կրթեալ ըս-  
վիլ, և տամնախններորդ դարուն ծնունդը . բայց աղէկ  
պէտք էք դիտնալ, որ ուրիշ ազգաց պէս՝ մեր Հայուն  
դարը փոփոխութիւն չընդունիր . նոյն դարը որ զերանե-  
լի Հայրենիս Խորենացին լացուց, նոյնը և այսօր կը  
շարունակէ, և չկայ երկբայութիւն որ թէ Խորենացին  
այսօր սղջ ըլլար, դարձեալ ձեռքը ճակին դրած պի-  
տի ըսեր . « Կողբամ քու վրայ Հայոց աշխարհք, որ ա-  
» մեն Հիւսիսային ազգերէ վեր էիր, հիմայ կորուսիր  
» զթագաւորութիւնդ . չկայ քահանայ, չկայ ոչ խորհրդ-  
» դական և ոչ ուսուցիչ . խաղաղութիւնդ վրդովեցաւ,  
» Ուղղափառութիւնը գրգուեցաւ, և տղիտութեամբ  
» շարափառութիւնը հաստատուեցաւ : Զրկուեցար քաջ  
» հովուէն և հովուակցէն : Վերցուեցաւ Մովսէս, բայց  
» չկայ Յեսու՝ որ անոր տեղը բռնէ, և առաջնորդէ Ա-  
» լեոտեաց երկիրը : Անտիքոս կը բռնագառէ՝ որ թողուի  
» հայրենի օրէնքը, բայց չկայ Մատթիայ որ դէմ դնէ :  
» Արթնցի՛ր Երեմիա, ողբա՛ ու մարգարէացիր քաջած  
» ու քաջելու թշուառութիւններնուս վրայ : Վարդապետ-  
» ներնիս տխմար, իրենք իրենց պատիւ առած, և ոչ  
» Աստուծմէ կանչուած . ոսկեսէրք, նախանձտք, թո-  
» ղուցեր են հեղութիւնը, ուր Աստուած կը բնակի, և  
» գայլերու պէս իրենց ոչխարները կը փորատեն : Կեղ-  
» ծաւօր կրօնաւորներ . պատուասէրք քան թէ Աստուա-  
» ծասէրք : Իշխանք յափշտակողք, աշխարհաւերք : Աս-  
» տուած պաշտութիւն մուացեալ, և ակնկալութիւն գե-  
հենի » (1) :

(1) Ողբամ գրեթէ Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց Հիւ-  
սիսականաց վեհագոյն . զի բարձաւ թագաւոր և քահանայ, խոր-  
հրդական և ուսուցող . վրդովեցաւ խաղաղութիւն . . . զրկուեցաւ  
ուղղափառութիւն . կայիպեցաւ տղիտութեամբ շարափառութիւն . . .  
Ի քաջէն գրկեալ հովուէ և հովուակցէ : . . . Վասն զի Մովսէս  
բարձեալ լինի, և Յեսու ոչ յաջորդէ՝ առաջնորդել յերկիրն Ալե-  
տեաց : . . . Անտիքոս բռնագառէ թողուլ զօրէնս հայրենիս, և  
Մատթիայ ոչ ընդդիմակայէ : . . . Զարթի՛ր Երեմիա, զարթի՛ր և  
ողբա հանդերձ մարգարէութեամբ որ ինչ թշուառացարս և որ ինչ  
թշուառանաւոյս և մք : . . . Վարդապետք տխմարք . . . անձամբ առ-

Չեմ դիտեր, եթէ Խորենացին ոչ ըլլար, արդեօք այս ողբիս վրայ ուրիշ բան մ'ալ պիտի չաւելցուներ... Տարակոյս չկայ որ պիտի ըսեր, թէ դուք ոչ միայն ուղղափառ չէք, այլ և ոչ քրիստոնեայ, զի Քրիստոս իր հետեւողաց նշան սէրը դրաւ. « Յայսմ ծանկեցեն ամենեքեան եթէ իմ աչակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս » : Ուր է հիմայ այս սէրը. « Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ », կըսէ Առաքեալը, իսկ դուք ամեն օր նոր չարութիւններ կը փնտռէք ընել անոնց, որոնք ամենեւին փասս մը չունին ձեզի : Քրիստոս հրամայեց թըշնամին սիրել և ատելիներուն բարիք ընել. իսկ դուք բարիք չընելէն զատ, միշտ չարիք կը մտածէք, որոնց... թշնամիներուն... ոչ երբէք. ձեր հարազատ եղբարցը, ձեր բարեկամաց, ձեր բարերարացը, որոց ըրած բարիքը մոռցած, կերած հացերնուդ փոխարէն, կը մատնէք զիրենք. կը կեղծաւորիք իբրեւ Յուդայ, և կը համբուրէք մատնելով : Ինչպէս կը յանդգնիք, դուք զձեզ աչակերտ Քրիստոսի անուանել : Քրիստոս ներել պատուիրեց թշնամեաց. իսկ դուք ինչուան ետքի կէտը հալածեցիք անձ մը, որուն յանցանքը ուրիշ բան չէր, բայց եթէ եկեղեցական գերագոյն իշխանութեան իբրեւ ուղղափառ որդի հնազանդել : Առաքելապետին առ Հըրէայս ըսածին պէս. « Դուք զՍուրբն և զարդարն ուրանցայք, և ինդրեցէք զայր մի մահապարտ շնորհել ձեզ » : Սուտ վկայութիւններով ուղեցիք ձեր զրպարտութիւններուն՝ ճշմարտութեան կերպարանք մը տալ, ու աղգին բարերարը ուրացաք, որուն բարեգործութեանց կոթող կանգնած են այսօր Սբ. Աստուածածնայ եկեղեցւոյն, և անոր Անարատ Յղութեան նուիրած տխուր աւերակները՝

Իսկ պատիւ, և ոչ յԱստուծոյ կոչեցեալ... ոսկեսէրք, նախանձուք, թողեալ զհեղութիւն, յորում Աստուած բնակէ, և դայլք եղեալ զիւրեանց հօտ զիշատելով : Կրօնաւորք կեղծաւորք... պատուասէրք քան թէ Աստուածասէրք : ... Իշխանք... յափշտակողք, աշխարհասէրք : ... Աստուածպաշտութիւն մոռացեալ և ակնկալութիւն գեհնի : (Մովս. Խորեն. Հատ. Բ. Գլ. ԿԸ.)

որոնք կը բողոքեն աղգիս յետագայ զաւակաց, ընդդէմ զիրենք այս աւաղելի վիճակին մէջ ձգողներուն :

Մեղադրելով երբեմն Առաքեալը զԿորնթացիս, կըսէր. « Չանարդս եկեղեցւոյ դատաւորս ձեզ կացուցանէք » : Ինչ պիտի ըսեր արդեօք, երբ տեսներ՝ որ արտաքոյ եկեղեցւոյ դանըած օտարահաւատներու առջեւ կը մատնեն իրենց Հովուապետը՝ բիւր անիրաւ և անօրէն զրպարտութեամբք. արհամարհելով Սբ. Ժողովոց և եկեղեցական կանոնաց նշուքները, որ այնպիսի մատնչաց վրայ կը թափեն : Եւ որ սարսափելին է, այս ամեն չարութեանց՝ զլուխ դանուողները՝ անոնք են, որոնք կը պարծին թէ հետեւողք են Առաքելոց՝ և Քրիստոսի աչակերտք. ստոնց համար կը մարդարէանայ Առաքելապետը ըսելով. « Լինիցին 'ի ձեզ սուտ վարդապետք, որք սըպատուիրէ իշխանն առաքելոց եպիսկոպոսաց. « Սրածեցէք, կըսէ, որ 'ի ձեզ հօտ է Աստուծոյ... մի՛ զօչաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. մի իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ Հօտին » : Ինչ արդեօք օրինակ պիտի առնուի այնպիսի Հովիւներէ, որոնք թիւնաւոր արօտներու մէջ արածելով իրենց յանձնըած հօտը, անոնց թշուառ մահուանը պատճառ կըլլան. և թըմբած ատելութեան կրիւք, կը թողուն որ հերետիկոսական վարդապետութիւնները, իբր դայլ յափշտակող՝ խեղճ անմեղ ոչխարները իրենց ժանեաց ճարակ պատրաստեն, և դեռ անզեղ չեն : « Որդիք մարդկան մինչեւ յե՛րբ էք » խստասիրտք » :

Արդ վերջ տալով ճառիս, կը յորդորեմ ըզձեզ, ո՛վ Համազգի Եղբարք, արթընցէք ելէք ձեր թըմբութեանէն. յիշեցէք ձեր հայրերը, ձեր մայրերը, որ ձեզի ուղղափառ հաւատոյ վարդապետութիւնը, և Սբ. Հռովմայ Եկեղեցւոյն դաւանութիւնը, Ժառանգութիւն ձեզիցին. անոր մէջ անար, անօր մէջ մեծցաք. մի՛ փոխէք սորուած վարդապետութիւննիդ. նոր և մալք վարդապետութեանց մի հետեւիք. որոնց աստուածաբանը չէ թէ Նազիւնգա.

ցին է կամ Ասկերերան, կամ Ենորհային, կամ Մքն. Թովմաս, այլ պիղծ և անկրօն լրագիրները, որոնք այսօրուան օրս աշխարհքիս վրայ եղած են գործիք սատանայի. այն անօրէն, անասուած լրագիրները, որոնք կարգալով ստէպ անմիտները, ճշմարտութիւն կը կարծեն անոնց գրածը, ու կարեւոր բանի մը պէս՝ ծոցերնին պահած մեկմեկու կը կարգան, մեկմեկու կը հաղորդեն ու չեն ձգեր ձեռքերնէն: Իսկ անոնց դէմ գրուած իսկապէս ճշմարտութիւնները՝ բնաւ իսկ չեն ուղէր կարգալ, և ոչ իսկ ձեռքերնին առնուլ, որ չըլլայ թէ խղճերնին չփոթի և սիրտերնին վիրաւորի: Աղօրմելի՛ անմտութիւն: Ստոնց կերպին նայելով, պիտի ըսենք՝ թէ ընդունայն գրուեր են Աւետարանները, ընդունայն մարգարէութիւնները, ընդունայն առաքելոց թղթերը. վասն զի անոնց ժամանակն ալ կռապաշաներ կային, հերետիկոս Քրիստոնեաներ կը գտնուէին, որոնք թէ ասոնց պէս չուղենային կարգալ այս Մք գիրքերը, մինչև այսօր մեր ծնողաց հետ՝ մենք ալ պիտի մնայինք խոր խաւար կռապաշտութեանց և մուրբութեանց մէջ: Անոր համար Քրիստոս Տէրն մեր կը հրամայէ Հրէաներուն ըսելով « Բննեցէք զգիրս, զի դուք « համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտեանականս, և նոքին իսկ են որ վկայեն վասն իմ: » Յիշեցէ՛ք ձեր հին հոգեւոր առաջնորդները. նորերուն ականջ մի՛ տաք. վասն զի կըսէ Ս. աքեալը. « եթէ ոք աւելի ինչ քարոզեացէ « ձեզ քան զոր մեքս քարոզեցաք, նզովեալ եղիցի »: Աս հերձուածողները իրեք տարի առաջ, երբ ուղղափառութեան լուսով կը վառէին, ամպիտներէն իրենց հիմակու քարոզութեանց բողբոլին ներհակը կը քարոզէին, կարգացէ՛ք, տեսէ՛ք ի՞նչպէս չմիաբանիր ասօրուան ըրած քարոզութիւննին, մանաւանդ եկեղեցական զլխաւոր իշխանութեան վրայ՝ հին ժամանակէ ՚ի վեր՝ Սուրբ Ժողովքներուն և Սբ. Հայրապետներուն ըրած քարոզութեանցը հետ: Թողէ՛ք յամառութիւնը, թոթուեցէ՛ք հպարտութեան կրծանիչ ախար. մոլորեցա՛ք, սխալեցա՛ք, ամօթ չէ թէ որ դառնաք ու զղաք. զի սխալիլը մարդու է,

բայց սխալիլ ու չզղալը սատանային. ուստի պէտք է որ մեկգի գնէք խստատրտութիւնը ու դարձեալ զիմէք ձեր բարեգութ մօր՝ Հռովմէական եկեղեցւոյ գիրկը. որ ձեռքերը բացած պատրաստ է ընդունելու: Մի՛ խաբուիք անոնցմէ, որոնք կըսեն թէ մենք ալ արդէն անոր գիրկն ենք. չէ՛, շատոնց ան մերժեց ձգեց զձեզ. վասն զի իր խրատներուն մըտիկ չըրիք, ու ապստամբ և անառակ որդիք եղաք, վասն զի արհամարհեցիք իր սպառնալիքները, ուրացաք իր կոնգալները. մերժեցիք, հայածեցիք իրեն ձեզի կարգած հաւատարիմ և իմաստուն հովիւր: ու այնպիսի առաջնորդներու հետեւեցաք, որոնց համար ըսաւ Յովհաննէս Աւետարանիչը. « Առ ՚ի մէնջ « ելին, այլ ոչ էին ՚ի մէնջ. զի եթէ ՚ի մէնջ էին ապա առ մեզ մնային »: Մէր մէջէն ելան կըսէ, բայց մեզի պէս չէին. թէ որ մեզի պէս ըլլային, մեր մէջը կը մնային: Այսպէս եղան այն երկու եպիսկոպոսները որոնք եկեղեցակապուտ և գլուխ ապստամբաց ըլլալով, և հերձեալ ՚ի կաթողիկէ եկեղեցւոյ. ՚ի վարձ իրենց անդամութեանը՝ եպիսկոպոսութիւն առին, և մինչև ետքի շունչերնին անդեղլ և յամառեալ մեռնելով, դնացին ակեղ դատաւորին ատենին առջին: . . . Յաւալի՛ մահ. . . հարկաւ ճանչցան հիմայ իրենց սխալանքը, կողբան իրենց յաւիտեանական դատապարտութիւնը, բայց խիստ ուշ: Ուստի շատ փափաքելի էր ոմանց, որ ասոնցմէ դոնեայ մէկը յարութիւն առնէր և պատմէր կենդանեաց՝ թէ ո՞րչափ մեծեղեր է իրենց յանցանքը, որպէս զի իրենք ալ թողուն անոնց մոլար վարդապետութիւնը և հետեւին ճշմարտութեան: Բայց անշուշտ ասոնք ալ պիտի լսեն Տեառն մերայ Սատուածասատ ձայնը Աբրահամու բերնէն. թէ անոնք որ Մովսեսի ու մարգարէներու մտիկ չեն ընէր, մեռել մ՛ալ յարութիւն առնու, չեն հաւատար. « եթէ Մովսեսի և մարգարէից ոչ լսեն. և ոչ թէ ՚ի մեռելոց ոք յառնիցէ, հաւատասցին »:

ԵՐ.	ՏՈՂ.	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂՂԵԼԻՔ
2	4	յարբէն	յարբէն
6	10	Կաթողիկ	Կաթողիկէ
15	15	Դաւանութիւն իրենց և	Դաւանութիւն և
31	33	Կոստանդնուպոլսոյ	Կոստանդնուպոլսոյ
29	29	Ժողովքէն կըլ-	Ժողովքէն կըլ-
29	30	հռչակուելէն ա	հռչակուելէն ալ



« Ազգային գրադարան



NL0247714

